

**ՎՃԻՌ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ**

**Երկու հազար տասնինը թվականի մարտի տասնմեկին**

**քաղաք Երևան**

Բնապահպանական հանրային դատարանը՝ Նազելի Վարդանյան, Հրանուշ Խառատյան, Զարուհի Հովհաննիսյան, Օլեգ Դուլգարյան, Ինգա Զարաֆյան կազմով

**Քարտուղարությամբ՝** Վիկտորյա Բուռնազյանի

**Մասնակցությամբ՝** ԷկոԼուրի փորձագետ Ռոզա Ջուլիակյանի, Շնող համայնքի ավագանու անդամ Աշոտ Ադամյանի, Շնողի բնակիչներ Լևոն Ալիխանյանի, Արայիկ Բաբայանի, Արփինե Բաբայանի, Թեդուտ բնակավայրի բնակիչ Ռայա Մելքոնյանի, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ՝ Արտակ Դեմիրջյանի, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի նախագահ Ելենա Մանվելյանի, «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնության անդամներ Անի Խաչատրյանի և Լևոն Գալստյանի, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կարինե Դանիելյանի, «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող Հակոբ Գևորգյանի, Epress.am կայքի լրագրող Շահանե Խաչատրյանի, «Շանթ» հեռուստաընկերության լրագրող Արփի Սուքիասյանի, «Հասարակական պաշտպանների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Արամ Գրիգորյանի, 1in.am կայքի լրագրող Մանվել Հարությունյանի, Ստեփանավան քաղաքի բնակիչ Հովսեփ Զիլավյանի, Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի 3-րդ աշխատանքային խմբի համակարգող Ամալյա Համբարձումյանի, Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող Սիլվա Այվազյանի, Հայնրիխ Բյոլ հիմնադրամի հայաստանյան ծրագրերի համակարգող Օյա Ազատյանի, իրավաբան, փորձագետ Արթուր Գրիգորյանի, ԱԺ ներկայացուցիչ Հերմինե Պողոսյանի:

**Դիմումատու՝**

Աննա Շահնազարյան

**Պատասխանողի ներկայացուցիչ / ներ՝**

պատշաճ ծանուցվել են, սակայն

ներկայացել է միայն ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրջյանը:

«Վալլեքս» խմբի ընկերությունների նախագահ Վալերի Մեջլումյանի անունից ուղարկվել է պատասխան:

Դատարանը, դոնբաց դատական նիստում քննելով «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի վերաբերյալ» բնապահպանական հանրային գործն՝ ըստ Աննա Շահնագարյանի դիմումի,

## ՊԱՐԶԵՑ

### I Գործի դատավարական նախապատմությունը

Ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ՀՀ կառավարությունն իր 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N 1279-Ն որոշմամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող գյուղատնտեսական նշանակության 81,483 հեկտար, այդ թվում 79,089 հա՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ ճանաչել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և այդ հիմնավորմամբ փոխել դրանք արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի: Նույն որոշմամբ 2,398 հա մակերեսով հողեր էլ փոխվել են էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի և հանձնվել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը:

ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 2006թ. նոյեմբերի 7-ին տրամադրվել է ««Արմենիան քափըր փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման 1-ին հերթի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ-135 դրական եզրակացությունը, որի գործողության ժամկետն ավարտվել է 2014թ. նոյեմբերի 7-ին:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը գտնվում է Շնող գետի և իր Կռունկ վտակի, Դուքանաձոր, Պակասաջուր գետերի հարևանությամբ: Այդտեղ է գտնվում ստորգետնյա ջրերի խոշոր ջրհավաք ավազանը, որից օգտվում են Հայաստանի հյուսիսային շրջանները, ինչպես նաև Ադրբեջանի և Վրաստանի սահմանամերձ շրջանները: Շնող գետը հանքավայրից 5 կմ հեռավորության վրա թափվում է Դեբեդ գետ, որն էլ իր հերթին՝ Քուռ գետ: Այսպիսի ջրառատ տարածաշրջանի համար կարևոր ջրային պաշարներ պարունակող վայրում տեղակայված է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը, որն էլ աղտոտում է, ինչպես ստորգետնյա, այնպես էլ վերգետնյա ջրային ավազանը, այդ թվում նաև Քուռ-Արաքս գետերի ավազանը: Թեղուտ և Շնող գյուղերը հանքավայրից գտնվում են համապատասխանաբար 3 կմ և 5 կմ հեռավորության վրա, իսկ այգիները և արտավայրերը՝ ավելի մոտ: Նշված հանքի շահագործման հետևանքով

աղտոտվում են նշված գյուղերի հողերը, ջրերը և մթնոլորտային օդը, գյուղացիների արտադրած գյուղատնտեսական մթերքը դարձել է ոչ պիտանի օգտագործման համար: Թեղուտի հանքը գտնվում է անտառային տարածքում՝ հարուստ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի տեսակներով: Ըստ «Վալլեքս» խմբի ընկերությունների պաշտոնական կայքի (<http://vallexgroup.am/environmental-management/#14>) տվյալների՝ 2017թ-ի վերջի դրությամբ հատվել է 223,2 հա անտառ: Ոչնչացել են կենդանիների ապրելավայրերը և բույսերի աճելավայրերը: Այդտեղ գտնվում են հանքային ջրերի աղբյուրներ և պատմամշակութային հուշարձաններ, որոնք նույնպես վնասվել և ոչնչացել են:

Համաձայն «Թեղուտ» ՓԲԸ-ի հավաստիացումներին, որ հանքարդյունահանությունն իրականացվելու է Հայաստանում նախադեպը չունեցող, լավագույն միջազգային ստանդարտներով, 2018թ. հանքի գործունեությունը հարկադրաբար դադարեցվեց Ընկերության կողմից՝ պոչամբարի պատվարի վթարային վիճակի և ջրային ավազանի աղտոտման պատճառով:

## **II Դիմումատուի փաստարկները և իրավական դիրքորոշումը**

Դիմումատու՝ Հայկական բնապահպանական ճակատ նախաձեռնության անդամ, Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության նախկին անդամ Ա.Շահնագարյանը, դիմելով Դատարան ներկայացրել է հետևյալ փաստերը և հիմնավորումները.

2007 թվականին ՀՀ նախկին կառավարությունը վերջնականապես արտոնագրեց «Վալլեքս» խմբի ընկերությունների անդամ «Արմենիան քափըր փրոգրամ» (Armenian Copper Program) և «Թեղուտ» ընկերություններին Լավարի անտառների զգալի մասը ոչնչացնելու և տեղում 25 տարով պղնձամոլիբդենային հանքավայր շահագործելու ծրագիրը՝

- հաշվի չառնելով շրջակա միջավայրի վրա աղետալի հետևանքների ներգործությունը
- խախտելով ՀՀ Սահմանադրությունը, վավերացված կոնվենցիաները, ինչպես նաև բազմաթիվ միջազգային և ներպետական իրավական ակտերը
- հաշվի չառնելով հանրության կարծիքը՝ ազգային հարստության սեփականացման ու անխնա թալանի հարցում
- խախտելով գյուղացիների գույքային իրավունքները, ինչը հանգեցրեց խիստ անհամաչ փոխհատուցման, և ինչը 2018թ. դրությամբ ճանաչվել է որպես իրավունքների խախտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:

**ՀՀ նախկին կառավարության ներկայացուցիչները շարունակաբար հրաժարվել են՝**

- հաշվետու լինել Թեղուտի հանքավայրի հետ կապված իրավիճակի, պետական մարմինների կողմից վերահսկողական գործունեության, հանքավայրի

շահագործման տնտեսական շահավետության, բնապահպանական, սոցիալական և ֆինանսական ճգնաժամերի համար

- անցկացնել ստուգումներ՝ պարզելու «Վալլեքս»-ի կողմից իրականացվող գործողությունների համապատասխանությունը լիցենզիային և դրական եզրակացություն ստացած նախագծին (կան փաստեր, որ «Վալլեքս»-ն ամբողջությամբ փոխել է հանքավայրի շահագործման նախագիծը, 2014թ-ից սկսած չունի Հանքավայրի շահագործման 2-րդ փուլի համար ՇՄԱԳ փորձաքննության դրական եզրակացություն)
- ապահովել թափանցիկություն և հայտնի դարձնել օֆշորային մի գոտուց մյուսը վերագրանցված «Վալլեքս» խմբի ընկերությունների իրական սեփականատերերին
- կատարել միջազգային կոնվենցիաներով՝ մասնավորապես Օրհուսի կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները և կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների խախտման առնչությամբ Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի երկու որոշումների պահանջները. դրանք են՝ ա/ վերականգնել որոշումների կայացման գործընթացում հանրության լիարժեք մասնակցությունը և բ/ ապահովել դատարան դիմելու իրավունքը՝ շրջակա միջավայրին վերաբերող որոշումները վիճարկելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների համար
- ընթացք տալ հանքավայրի շահագործման թույլտվության դատական կարգով վիճարկմանը հասարակական կազմակերպությունների կողմից:

Այս իմաստով, **ՀՀ տարբեր գերատեսչություններ** թույլ են տվել հանցակազմ պարունակող հետևյալ գործողությունները՝

- պաշտոնական լիազորությունների գերազանցում
- պաշտոնական դիրքի չարաշահում
- պաշտոնական անգործություն
- հանցագործության պարտակում
- կոռուպցիա
- հանցագործություն բնության և մարդկության դեմ (մանրամասն փաստարկները՝ ստորև):

**«Վալլեքս» խմբի ընկերություններին պատկանող տարբեր ընկերություններ** («Արմենիան քափրր փրոգրամ» ՓԲԸ, «Թեդուտ» ՓԲԸ, «Մանես և Վալլեքս»), որոնք պետական մարմիններից ստացել են լիցենզիաներ և թույլտվություններ, կոպտորեն խախտել են ՀՀ ներպետական օրենսդրությունը և պետության կողմից վավերացված միջազգային իրավական նորմերը (մանրամասն փաստարկները՝ ստորև):

**Թեդուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործումը ֆինանսավորող՝ ռուսական ՎՏԲ Բանկը** չի իրականացրել ռիսկերի իրատեսական գնահատում (due diligence) և իր ֆինանսավորած ծրագրի նկատմամբ պատշաճ վերահսկողություն, որի արդյունքում ստեղծված աղետալի իրավիճակի համար կիսում է պատասխանատվություն, որի իրավական շրջանակները պետք է սահմանի ՀՀ իրավասու դատարանը: Ֆինանսավորող

այլ միջազգային կառույցներ, մասնավորապես՝ Դանիայի արտահանումները խթանող «Արտահանումների վարկավորման գործակալությունը» (EKF) և PensionDenmark մասնավոր կենսաթոշակային հիմնադրամը 2017 թվականի հոկտեմբերի 16-ին դադարեցրել են դեռևս 2013 թվականին Թեղուտի պղնձամոլիբդենային հանքի շահագործման համար ՎՏԲ Բանկի միջոցով «Վալլեքս» խմբին տրամադրած շուրջ 62 միլիոն ամերիկյան դոլարի չափով վարկը: Վարկի դադարեցման պատճառները եղել են կնքված պայմանագրի մաս կազմող սոցիալական և բնապահպանական ծրագրի կետերի խախտումները, մասնավորապես՝ ընկերության կողմից ջրերի աղտոտումը, պոչամբարի հետ կապված խնդիրները, ինչպես նաև Ալավերդու պղնձաձուլարանի աշխատանքային պայմանների վատթար վիճակը:

### **Փաստարկներ.**

Ստորև ներկայացվում են Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի աղետալի հետևանքների և ճգնաժամային իրավիճակի համար պատասխանատու մարմինների ու սուբյեկտների պատասխանատվության շրջանակներն առանձին-առանձին:

### **ՀՀ պետական մարմիններ**

#### ***ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն և Ընդերքի տեսչություն***

ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ինչպես նաև նախարարության վերահսկողության ներքո գտնվող այլ մարմիններ թույլ են տվել անգործություն, պաշտոնեական լիազորությունների գերազանցում և առևերույթ հանցագործության պարտակում՝ հետևյալ դրվագներով (ժամանակագրորեն հետընթաց կարգով).

1. Հաշվի առնելով, որ «Թեղուտ» ՓԲԸ-ն լիազոր մարմինն չի ներկայացրել դիմում հանքավայրի շահագործման գործունեությունը դադարեցնելու մասին, ինչը փաստարկված է 2018թ. հունիսի 27-ին նախարարությունից Հայկական բնապահպանական ճակատին տրված պատասխանում, դեռևս 2018թ. սկզբին նախարարությունն ունեցել է «Թեղուտ» ՓԲԸ-ին **գրավոր զգուշացում տալու և Ընդերքի օրենսգրքի պահանջները չկատարելու համար լիցենզիայից զրկելու** համար բոլոր հիմքերն ու իրավասությունները՝ համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչը, սակայն **չի կատարել:**
2. ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը 2013թ. փետրվարի 20-ին «Թեղուտ» ՓԲԸ-ին տվել է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ՇԱՎԹ-29/376 թույլտվությունը, նույն ամսաթվով կնքել է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-376 պայմանագիրը, ինչպես նաև տրամադրել է թիվ ԼՎ-376 լեռնահատկացման ակտը: Կնքված նոր պայմանագրի (աշխատանքային նախագծի փոփոխությամբ), տրված նոր թույլտվությունների և լեռնահատկացման ակտի պարագայում Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի արդյունահանման ծրագիրը **պետք է անցներ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր փորձաքննություն, ինչը չի արվել (<http://teghut.am/legal-processes-teghut/>):**

3. Նախարարությունն անտեսել է Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության կողմից մամուլում հրապարակված և նախարարությանը հասանելի տեղեկություններն այն մասին, որ **Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործվում է բոլորովին այլ աշխատանքային նախագծով՝ ոչ թե 2006 թվականին հաստատված ՇՄԱԳ-ով և Աշխատանքային նախագծով թույլատրված փորձաքննական դրական եզրակացության պայմաններով**, այլ միանգամայն նոր՝ 2010 թվականին կազմված նախագծով, որը չի անցել օրենքով սահմանված ընթացակարգերը և չի ենթարկվել բնապահպանական փորձաքննության: Աշխատանքային նոր նախագծի և նախկինում հաստատված և միակ ՇՄԱԳ փորձաքննությունն անցած՝ 2006թ. դրական եզրակացությամբ թույլտվության համեմատական է անցկացրել ERM ընկերությունը և արձանագրել, որ
- Համաձայն 2010 թվականին կազմված՝ Թեղուտի բացահանքի շահագործման նոր նախագծի՝
    - ավելանալու է բացահանքի շահագործման խորությունը՝ 432 մետրից հասնելով 890 մետրի, որը շահագործման տարածքի հաշվառմամբ կազմում է Բալթիկ ծովի մակարդակից ցածր (որպես ծովի մակարդակի չափման հիմք է ընդունվում Բալթիկ ծովի մակարդակը).
    - փոփոխվել են բացահանքի եզրագծերը.
    - առաջանալու է թափոնների ավելի մեծ քանակություն, քան նախատեսված էր 2006 թվականին կազմված և փորձաքննության ներկայացված նախագծով.
    - թափոնները տեղադրելու համար պահանջվելու են ավելի ընդարձակ տարածքներ, քան նախատեսված էր 2006 թվականին կազմված և փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ-ով.
    - փոփոխվել են օժանդակ շինությունների տեղադիրքն ու այլ տեխնիկական պայմանները.
    - փոփոխվել են հանքավայրի շահագործման այն չափորոշիչները, որոնք ներկայացված էին 2006 թվականին փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ-ում և այլն:

Այս զեկույցը Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը հրապարակել է նախաձեռնության կայքում (<http://teghut.am/2015/07/teghut-mining-illegal/>), ներկայացրել պետական լիազոր մարմիններին, այդ թվում՝ Էներգետիկայի նախարարությանը, սակայն **որևէ գործողություն դրա հիմքով չի կատարվել:**

4. Անկախ 2013թ. «Թեղուտ» ՓԲԸ-ի հետ կնքված նոր պայմանագրից, Էներգետիկայի նախարարությունը պարտավոր էր հետևել, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության միակ փաստաթղթի՝ 2006թ. նոյեմբերի 7-ին հաստատված «Արմենիան քափրր փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման 1-ին հերթի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության

ԲՓ-135 եզրակացության գործողության ժամկետն ավարտվել է 2014թ. նոյեմբերի 7-ին: Այս հիմքով նույնպես, «Թեղուտ» ՓԲԸ-ին տրված լիցենզիաները և պայմանագրերը ենթակա են եղել դադարեցման, ինչը չի արվել:

5. ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների հաստատման գործընթացում չի անցկացրել Ընկերության ներկայացրած պաշարների գնահատման, դրանց արդյունահանման տնտեսական օգտակարության անկախ և իրատեսական փորձաքննություն և ուսումնասիրություն: Մինչդեռ, «Վալլեքս» խմբի անդամ՝ «Մանես և Վալլեքս» ընկերության համար, դեռևս 2001թ. Կանադական Ստրատկոնա խորհրդատվական ընկերության ներկայացրած ուսումնասիրության համաձայն՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում պղնձի պարունակության ցածր աստիճանը, տվյալ ժամանակաշրջանի մետաղական գների և արդյունահանման ակնկալվող ծախսերի պարագայում **հանքավայրի շահագործումը դարձնում է տնտեսապես անարդյունավետ** (Scoping Review, Teghout Copper-Molybdenum Project, Region of Lorri Armenia, For Manes Yev Vallex, April 2001, Strathcona Mineral Services Limited, Canada տե՛ս Հավելված 1, Հավելված 2): Հետագայում պաշարների հետ կապված ներկայացված նոր տվյալները ենթակա են եղել մանրակրկիտ ու կրկնակի ստուգման՝ դրանց հավաստիությունը ճշտելու համար, ինչը, սակայն, չի արվել:

### ***ՀՀ բնապահպանության նախարարություն և Բնապահպանական տեսչություն***

ՀՀ բնապահպանության նախարարությունը և Բնապահպանական տեսչությունը, ինչպես նաև նախարարության այլ մարմիններ թույլ են տվել անգործություն, պաշտոնեական լիազորությունների գերազանցում և առևերույթ հանցագործության պարտակում՝ հետևյալ դրվագներով (ժամանակագրորեն հետընթաց կարգով).

1. ՀՀ կառավարությունը, լիազոր մարմինների հետ (այդ թվում՝ Բնապահպանության նախարարություն և Բնապահպանական պետական տեսչություն) անտեսել են Հայկական բնապահպանական ճակատ նախաձեռնության՝ 2017թ. նոյեմբեր ամսվա դիմումը՝ Թեղուտում լայնածավալ ստուգումներ անցկացնելու պահանջով՝ հաշվի առնելով ջրերի աղտոտման, պոչամբարի վթարային լինելու մասին տեղեկությունները և ֆինանսական վերահաս ճգնաժամը՝ պայմանավորված դանիական վարկավորման դադարեցման հետ (<http://www.armecofront.net/lrahos/teghut-stugum/>):
2. ՀՀ բնապահպանության նախարարությունն ու բնապահպանական տեսչությունը չեն իրականացրել պարբերական մոնիտորինգներ և պլանային ստուգումներ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում՝ անտեսելով ոչ միայն սեփական պարտականությունները, այլև հանրային ահազանգերը (<http://www.armecofront.net/lrahos/teghut/>, <http://www.armecofront.net/lrahos/bnapahpanutian-nakhararutiuny-teghut-ynkerutian-pashtpan/>)

3. ՀՀ բնապահպանության նախարարն անտեսել է 2015թ. Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության ներկայացրած դիմումն այն մասին, որ **Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրն ընթանում է բոլորովին նոր՝ չհաստատված և փորձաքննություն չանցած ծրագրով**, ինչը փաստում է ERM խորհրդատվական ընկերության զեկույցը (<http://teghut.am/2015/07/bac-namak-stugumner/>) և չի հանձնարարել տեսչությանն իրականացնել լայնածավալ ստուգումներ «Թեղուտ» ՓԲԸ-ում և հանքավայրում:
4. 2014-2015 թվականներին Թեղուտի պաշտպանության նախաձեռնությունն իրականացրել է արբանյակային պատկերների ուսումնասիրություն՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) միջոցով: Կատարվել է «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ ձեռնարկությանը («Թեղուտ» ՓԲԸ) հատկացված պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում պլանավորվելիք աշխատանքները նշող տոպոգրաֆիական քարտեզի (աշխատանքային նախագծի մաս) և արբանյակային պատկերների համեմատական վերլուծություն: Հետազոտության արդյունքում արված բացահայտումները թույլ են տալիս պնդել, որ **ապօրինի լիցենզավորումից հետո նույնիսկ՝ Թեղուտի հանքավայրը շահագործվում է թույլտվություն ստացած աշխատանքային նախագծի կոպիտագույն շեղումներով** (պատկերներն ու վերլուծություններն՝ նախաձեռնության ֆեյսբուքյան էջի՝ Թեղուտի ապօրինություններն արբանյակից այրումում [https://www.facebook.com/pg/save.teghut/photos/?tab=album&album\\_id=866405390102966](https://www.facebook.com/pg/save.teghut/photos/?tab=album&album_id=866405390102966)): Այս մասին գրվել են հոդվածներ, նկարահանվել է վավերագրական ֆիլմ՝ («Թեղուտն օրենքից դուրս» <http://teghut.am/2015/07/teghut-beyond-the-law-part-1-arm/>), անց են կացվել հանրային քննարկումներ: Բնապահպանության նախարարությունը և այդ ժամանակ նրա կազմում գտվող բնապահպանական տեսչությունը որևէ գործողություն չեն ձեռնարկել:
5. ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 07.11.2006 թվականին տրված և Բնապահպանության նախարարի կողմից հաստատված՝ ««Արմենիա Քափրը Փրոգրամ» ՓԲԸ կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի I-ին հերթի (8 տարի) շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական **թիվ ԲՓ-135 դրական եզրակացությունը հակասել է ՀՀ մի շարք օրենքների և միջազգային կոնվենցիաների**, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ ջրային օրենսգրքին, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին, ՀՀ հողային օրենսգրքին, ՀՀ կոնցեսիաների տրամադրման մասին օրենքին, ՀՀ ՇՄՍՓ օրենքին, ՀՀ Բուսական և կենդանական աշխարհի մասին օրենքներին, Միջազգային կոնվենցիաներին՝ մասնավորապես՝ Օրիուսի և Էսպոյի կոնվենցիաներին (հիմնավորումները՝ 2009թ. ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում, հղումը՝ <http://teghut.am/wp->



<content/uploads/2012/03/%D5%80%D5%A1%D5%B5%D6%81%D5%A1%D5%A4%D5%AB%D5%B4%D5%B8%D6%82%D5%B4.pdf>):

6. Վերը հիշատակված դրական եզրակացության եզրափակիչ մասում նշված է. «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, վերը նշված դիտողությունները և առաջարկությունները «Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի և հանքահարստացուցիչ կոմբինատի» նախագծի նախագծման փուլում հաշվի առնելու պարտադիր պայմանով»: **Առկա միակ ՇՄԱԳ եզրակացության պարտադիր պայման հանդիսացող կետերի կատարման նկատառմամբ երբեք չի իրականացվել վերահսկողություն**, նույնիսկ բազմաթիվ դիմումների հիման վրա:
7. 2006թ. նոյեմբերի 7-ին հաստատված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ-135 եզրակացության գործողության ժամկետն ավարտվել է 2014թ. նոյեմբերի 7-ին: Համաձայն «Ընդերքի մասին օրենսգրիք» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումն առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է: **Թեղուտի հանքավայրի շահագործման համար չկա 2014 թ-ից հետո գործող փորձաքննական եզրակացություն**, քանի որ հանքավայրի շահագործման երկրորդ հերթի նախագծային փաստաթղթերն առ այսօր չեն ներկայացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Այս հիմքով նույնպես, Բնապահպանության նախարարությունն ուներ լիազոր մարմիններին ընկերության գործունեությունը դադարեցնելու պահանջով դիմելու լիազորություն, ինչը չի արել:

### ***Արտակարգ իրավիճակների նախարարություն և Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն***

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը և Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը թույլ են տվել անգործություն, պաշտոնեական լիազորությունների գերազանցում և առևերույթ հանցագործության պարտակում՝ հետևյալ դրվագով (ժամանակագրորեն հետընթաց կարգով).

1. 2018թ. հունվարի 19-ին իրավապաշտպան Արթուր Սաքունցն իր ֆեյսբուքյան էջում գրառում էր կատարել, որում մասնավորապես նշել էր հետևյալը. «Հավաստի տվյալների համաձայն Թեղուտի պոչամբարի պատվարում ճեղքեր են առաջացել, որի հետևանքով առնվազն չորս օր է՝ պոչամբարի թափոնները հոսում և լցվում են Դեբեդ գետը: Սա լուրջ էկոլոգիական աղետների պատճառ կարող է հանդիսանալ նաև անդրազգային մակարդակով, քանի որ Դեբեդը հոսում է դեպի հարևան Վրաստանի սահմանը: Ըստ որոշ տեղեկությունների՝ այս աղետի մասին տեղեկատվության արտահոսքը հնարավոր միջոցներով փորձում են կանխել իրավապահ մարմինների ներգրավմամբ»: Հայկական բնապահպանական ճակատ նախաձեռնությունն իր հերթին ստացել էր տեսանյութ, որում երևում էր պոչամբարից թափոնաջրերի բաց թողնումը

(<http://www.armecofront.net/lrahos/inch-e-katarvum-teghutum/>): Հետագայում ընկերությունն ընդունեց, որ հանքավայրի շահագործումը դադարեցնում է պոչամբարի կայունության հետ կապված խնդիրների պատճառով: Մինչ այդ, 2016թ. Համաշխարհային Բանկի պատվերով շվեդ երկրաբան մասնագետների հետազոտության և եզրակացությունների համաձայն՝ Թեղուտի պոչամբարը սեյսմակայուն չէ և չի համապատասխանում պոչամբարների կառուցման միջազգային չափանիշներին (<http://documents.worldbank.org/curated/en/810031468197953609/pdf/106237-ARMENIAN-WP-P155900-PUBLIC.pdf>): Մինչ այդ, Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի պոչամբարը փորձաքննություն է անցել միայն 2017 թ. և ԱԻՆ-ի «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ստացել դրական եզրակացություն: «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի հարցմանն ի պատասխան՝ ԱԻՆ գլխավոր քարտուղարը նշել է, որ ««Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող պոչամբարային տնտեսություն արտադրական վտանգավոր օբյեկտը տեխնիկական անվտանգության փորձաքննության է ենթարկվել 2017 թ-ի ապրիլ ամսին, և տվյալ ժամանակահատվածում պոչամբարի պատվարի հետ խնդիրներ չեն հայտնաբերվել»: Սա այն դեպքում, երբ մեկ տարի առաջ միջազգային փորձագետների արած հետազոտությունը պնդում էր, որ Թեղուտի պոչամբարը սեյսմակայուն չէ:

### ***Անշարժ գույքի կադաստրի կոմիտե***

Համաձայն Շնող և Թեղուտ գյուղերի բնակիչների՝ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն կադաստրային զեղծարարություններ է կատարել՝ հոգուտ «Վալլեքս» խմբի ընկերությունների՝ կեղծելով հողերի կատեգորիաներ, թերհաշվարկելով բնակիչների սեփականություն հանդիսացող գույքը, որը փոխանցվել է հանք շահագործողին, իրականացրել է այլ բնույթի զեղծարարություններ: Այս հարցը ենթակա է հետաքննության:

Հանքավայրի շահագործման ակնհայտ ապօրինությունների մասին դիմումների և հանցագործության մասին հաղորդումների անտեսման, ինչպես նաև պետական մարմինների կողմից որևէ տեսակի տեսչավորում չիրականացնելու պրակտիկական վկայում է, որ իշխանությունները հետևողական կերպով կոծկել են Թեղուտի հանքավայրի շահագործման լայնամասշտաբ ապօրինությունները: Սա ոչ միայն վկայում է (նախկին) իշխանությունների և «Վալլեքս» խմբի առերևույթ կոռուպցիոն հարաբերությունների մասին, այլև՝ էկոլոգիական հանցագործության մեջ անմիջական մասնակցության մասին:

***«Վալլեքս» խմբին պատկանող տարբեր ընկերություններ, որոնք առնչվել են Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրին***  
***«Մանես և Վալլեքս»***

1. «Մանես և Վալլեքս» ընկերությունը թաքցրել և հետագայում անտեսել է կանադական Strathcona խորհրդատվական ընկերության գնահատականները, որ

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում պղնձի ու մոլիբդենի հանքանյութերը ցածր դասի են և տնտեսապես շահութաբեր կարող են չլինել: Տնտեսական արդյունավետությունը հնարավոր կլինի բարձրացնել Ալավերդու պղնձաձուլարանում կապիտալ ներդրումների ու վերազինման արդյունքում և մետաղական շուկայում պղնձի ու մոլիբդենի գների բարձրացման պարագայում, ինչը չի արվել, և գների անկում է եղել 2013 թ-ից սկսած (տես՝ Scoping Review, Teghout Copper-Molybdenum Project, Region of Lorri Armenia, For Manes Yev Vallex, April 2001, Strathcona Mineral Services Limited, Canada, Հավելված 2):

2. «Մանես և Վալլեքս» ընկերությունը թաքցրել է Strathcona խորհրդատվական ընկերության եզրակացությունը, որ «Հաշվի առնելով հանքավայրի լեռնային լանդշաֆտը և ուժեղ երկրաշարժային գոտում գտնվելը՝ լրջագույն տեխնիկական և, հետևաբար, ֆինանսական դժվարություն է ներկայացնում 500 միլիոն տոննա պոչանք պարունակող անվտանգ ու բնապահպանական առումով ընդունելի պոչամբար կառուցելը և 600 միլիոն տոննա տարբեր տեսակ թափոններ տեղադրելը այդ տարածքում» (Scoping Review, Teghout Copper-Molybdenum Project, Region of Lorri Armenia, For Manes Yev Vallex, էջ 10, April 2001, Strathcona Mineral Services Limited, Canada, Հավելված 1):

#### **«Արմենիան քափրը փրոզրան» ՓԲԸ**

1. ՀՀ պետական մարմիններին 2005-2007 թթ. լիցենզավորման և թույլտվություններ ստանալու համար ներկայացրել է ոչ պատշաճ, շրջակա միջավայրի վրա ազդեցության իմաստով թերի և կեղծված տեղեկություններ (2009թ. ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում, հղումը՝ <http://teghut.am/wp-content/uploads/2012/03/%D5%80%D5%A1%D5%B5%D6%81%D5%A1%D5%A4%D5%AB%D5%B4%D5%B8%D6%82%D5%B4.pdf>, Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի անկախ փորձագիտական գնահատումներ՝ <http://teghut.am/expert-opinion-arm/>)
2. Թաքցրել և համապատասխան գործողություններ չի իրականացրել կանադական Strathcona խորհրդատվական ընկերության վերանայված՝ 2005թ. զեկույցի կապակցությամբ այն մասին, թե հանքավայրի արդյունահանման տնտեսական շահավետությունը բարձրացնելու համար ինչ միջոցներ են անհրաժեշտ (Report On The Teghout Copper-Molybdenum Project, Armenian Copper Programme, April 2005, Canada, Strathcona Mineral Services Limited, Հավելված 2):
3. Թաքցրել է, որ 2010թ. միջազգային «Ստարտկոնա», «Միկրոմայն» և «Կավոնզգարեն» խորհրդատվական կազմակերպությունների մշակած նոր աշխատանքային նախագիծն է ներկայացրել ֆինանսավորման և որդեգրել այն որպես շահագործման ծրագիր: Նոր աշխատանքային նախագիծը չի անցավ համապատասխան փորձաքննություններ, ուստի դրա հիմքով հանքավայրի շահագործումը եղել է ապօրինի:
4. Թաքցրել է ֆինանսավորման նպատակով գնահատում ստանալու համար ERM խորհրդատվական ընկերության զեկույցը, որը մատնանշում էր, որ հանքավայրի

նախագիծը փոխվել է և չի անցել համապատասխան թույլտվություններ, իսկ Լեռնամետալուրգիայի ինստիտուտի կազմած ՇՄԱԳ հաշվետվությունը չի համապատասխանում միջազգային ներդրումային ստանդարտներին, ուստի դրա հիման վրա ֆինանսավորողները չեն կարող համարել, որ կատարված է շրջակա միջավայրի վրա պատշաճ գնահատում (ERM գեկույցը, հասանելի <http://teghut.am/2015/07/teghut-mining-illegal/> հղումով):

5. Հատել է անտառներ՝ առանց որևէ փոխհատուցում և պատշաճ անտառատնկում իրականացնելու:
6. Հանրությանը ներկայացրել է ակնհայտ սուտ տեղեկատվություն՝ հանքավայրի բացասական ազդեցության հետ կապված:
7. Ունեզրկել է Թեղուտ և Շնող համայնքների սեփականատերերին և ապօրինի գործարքների միջոցով յուրացրել նրանց սեփականություն համարվող հողերը և այլ գույքը:

### **«Թեղուտ» ՓԲԸ-ն**

1. Հանքավայրի շահագործումը սկսել է նոր նախագծով՝ առանց համապատասխան փորձաքննական եզրակացությունների:
2. Անկախ նոր նախագծի հանգամանքից, 2014 թ-ից չի ունեցել հանքի շահագործման համար շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննական եզրակացություն:
3. Հանքը շահագործել է ապօրինաբար և բնությանն ու մարդկանց հասցրել անդառնալի վնասներ՝ աղտոտելով Շնող և Դեբեդ գետերը, դրանց միջոցով՝ գյուղացիների այգիներն ու բերքը, խախտել է առանց այդ էլ ապօրինաբար կնքված պայմանագրերն ու հանձնառությունները ՀՀ պետության նկատմամբ:
4. Պատասխանատու է ընկերության ֆինանսական գործարքների հիմք հանդիսացող պայմանագրերի կոպիտ խախտման, ընկերությունը ֆինանսական ու գործառնական փլուզմանը հասցնելու համար:

### **III Պատասխանողների ներկայացուցչի փաստարկները և իրավական դիրքորոշումը**

ա) ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրյան - Ինչ «Թեղուտ» ՓԲԸ-ն այդ լիցենզիաները ձեռք բերեց, եթե չեմ սխալվում 3 անգամ ՏԻՄ ընտրություններ են եղել, գյուղի նախագահը, ավագանին է փոխվել: Եվ եթե ենթադրենք, որ այդ բոլոր փոխոփոխությունները լավ չեն աշխատել և ժողովրդի մտահոգությունները չեն արտահայտել, դա մնում է ստատիստիկա:

Լոռու մարզպետարանն էլ 90 տոկոսով, եթե ոչ ավել, ինչքան լսումներ, հանրային քննարկումներ են եղել, միշտ գնացել ենք: Թեղուտ և Շնող, Ալավերդի համայնքներում ինչքան այդպիսի քննարկումներ է իրականացրել «Թեղուտ» ՓԲԸ-ն, հիմնականում աշխատատեղի, վարձավճարի վերաբերյալ հարցերն են հնչել քննարկումներին: Սուր բնապահպանական խնդիրների վերաբերյալ հարցերը եզակի են եղել, մենք աչալուրջ ենք

եղել: Մեր հիմնական միսիան այն էր, որ պետություն-հասարակություն-համայնք համագործակցությունը ճիշտ լինի:

Լոռու մարզպետարանը 4 տարի շարունակ դիմել է Բնապահպանության նախարարին, որպեսզի Թեղուտ, Շնող համայնքները ընդգրկվեն առավել վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում, որպեսզի բնապահպանական սուբվենցիաներ ստանան որպես տուժվող համայնքներ: Բնապահպանության նախարարությունը հավանություն է տվել, որ համայնքները ընդգրկվեն, բայց գործընթացը հասել է Ֆինանսների նախարարություն, այնտեղ՝ կասեցվել:

Եթե համայնքը ստանար բնապահպանական սուբվենցիաներ, կունենար լրացուցիչ եկամուտ, ավելի պատասխանատու կլիներ, հետևողական կլիներ արտանետումների և բնապահպանական վճարների նկատմամբ: Ցավոք սրտի, այդ պրոցեսը չգնաց, և Թեղուտն էլ փակվեց: Ապագայում այդ գործընթացն, ինքնըստինքյան, կասեցվեց:

Եթե լրատվամիջոցի կամ թեժ գծով Թեղուտից, Շնողից ահազանգ ենք լսել, անմիջապես կապվել ենք թե՛ գյուղապետարանի, թե՛ տեսչության, թե՛ արտակարգ իրավիճակների նախարարության հետ, վերահսկողության տակ ենք պահել:

Թերևս ամենալավ Ընդերքի մասին օրեսօրիքը 1993 թ-ինն էր, 2012 թ. այն փոխվեց և Տարածքային կառավարման նախարարության և ՏԻՄ կառավարումը ընդերքի ոլորտում, կարելի է ասել, գրոյացավ: Փաստացի ստացվում է, որ տարածքային կառավարումը, թե ինքնակառավարումը՝ հանքավայրի թե հետախուզման, թե շահագործման, և թե լիցենզիայի հետ կապված, սահմանափակվեց:

Ես կարող եմ ասել, որ ցանկացած գրություն պարտաճանաչ ձևի պատասխանը տվել ենք, ուղարկել: Եթե անհրաժեշտ է եղել, ուղղորդել ենք դիմել դատարան:

Մենք ստուգելու, վերստուգելու իրավասություն չունենք, դա բնապահպանության և ընդերքի տեսչությանն է տրված:

**բ) «Վալլեքս խմբի ընկերությունների նախագահ Վալերի Մեջլումյանի անունից ուղարկված պատասխանն է.**

««Վալլեքս» խմբի ընկերությունների նախագահ Վալերի Մեջլումյանին հասցեագրված Ձեր 6.03.2019թ. գրությանն ի պատասխան հայտնում ենք.

Մենք բարձր ենք գնահատում Ձեր մղումը կազմակերպվող հանրային քննարկմանը բոլոր կողմերի ներգրավվածությունն ապահովելու և շնորհակալ ենք մեր տեսակետն այդ քննարկման շրջանակներում հայտնելու հնարավորություն տալու համար: Միննույն ժամանակ հայտնում ենք, որ չնայած այն հանգամանքին, որ Թեղուտի լեռնահանքային համալիրը կառուցվել և գործարկվել է առավելապես «Վալլեքս» խմբի ընկերությունների մարդկային ռեսուրսների ներգրավմամբ, այդուհանդերձ ներկայում մենք որևէ իրավասություն չունենք «Թեղուտ» ՓԲ ընկերության անունից հանդես գալու և մեկնաբանելու ինչպես անցյալին ու ներկային, այնպես էլ ապագային վերաբերող խնդիրները:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի կառուցման և պղինձ մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի հիմնական փուլն իրականացվել է «Վալլեքս» խմբի և ռուսական ՎՏԲ բանկի համատեղ ձեռնարկություն հանդիսացող «Թեղուտ Ինվեսթմենթս Լիմիթեդ» ընկերության կողմից «Թեղուտ» ՓԲ ընկերության կառավարման պայմաններում:

Ինչպես հավանաբար Ձեզ արդեն հայտնի է մեր պաշտոնական հաղորդագրություններից, լեռնահանքային համալիրի շահագործման ընթացքում առաջացել է պոչանքային տնտեսության որոշ հանգույցների անվտանգության և հուսալիության բարձրացման անհրաժեշտություն, և շրջակա միջավայրի համար ռիսկերի կառավարելիության ապահովման նպատակով «Վալլեքս» խմբի ընկերությունները դադարեցնել են համալիրի գործունեությունը: Այդ իրավիճակում ՎՏԲ բանկը 2018թ. սեպտեմբերին տիրացել է «Թեղուտ» ՓԲ ընկերության բաժնետոմսերի ամբողջ փաթեթին և մեր գնահատմամբ դա արել է ոչ իրավաչափ ճանապարհով: «Վալլեքս» խումբն այդուհետ չունի իրավական հիմքեր «Թեղուտ» ՓԲ ընկերության անունից որևէ մեկնաբանություն ներկայացնելու շահագրգիռ հանրությանը:

Հուսով ենք, որ «Թեղուտ» ՓԲ ընկերությունը նաև ներկա սեփականատիրոջ օրոք կշարունակի շահագրգիռ հանրության հետ թափանցիկ աշխատանքի «Վալլեքս» խմբի ձևավորած ավանդույթները և պատշաճ կարձագանքի Ձեր հրավերին: Հարգանքով,

«Վալլեքս» խմբի ընկերությունների Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին», 07.03.2019թ.»:

զ) Այլ շահառուների ներկայացուցիչներ չեն ներկայացել:

#### IV Տուժողների վկայությունները

- **Աշոտ Ադամյան` Շնող համայնքի ավագանու անդամ** - Շնող համայնքի բնակիչ եմ, զբաղվում եմ հողագործությամբ: Իմ այգին արդեն տնկած է եղել, պատրաստի, երբ «Թեղուտը» սկսեց իր գործունեությունը: Իմ վնասը սկսել է ջրային արտահոսքից: Մենք չէինք հասկանում, որ հսկայական վնաս կտա: Մինչև հասկացանք, իրենց տեղյակ պահեցինք, ասացին որ արտահոսք չկա, պատահական կարող է վթար լինի ու այդպես շարունակ մինչև հասավ 2017 թ., երբ պոչամբարը լցվեց, և ի վիճակի չէին պահել: Այն ժամանակ մեկ-մեկ բաց էին թողնում, որ պոչամբարը դատարակվեր, էլի լցնեին: Լրիվ թափում էին Շնող գետը: Շնող գետի տվյալները կա: Մաքուր` 2-րդ աստիճանից գետը հասավ 5-րդ` ամենաբարձր աղտոտվածության աստիճանի: Մենք այդ ջուրն օգտագործել ենք: Մոտավորապես 300 հատ դեղձի ծառ եմ կտրել: Եթե բերքի տակ ծառը հաշվենք, էսօր մենակ մի ծառը հաշվարկվում է 150 հազար դրամ, մի ծառի գինը գալիս է մոտ մի 45 միլիոն դրամ: Իրենց դիմել եմ, որ վնաս եք տվել, փոխհատուցեք, պատասխանել են` ինչով եք համոզված, որ մենք ենք վնաս տվել: Անխնա ձևի թե՛ օդը, թե՛ ջուրը աղտոտել են: Ու երբ շատ պահանջեցինք, իրենք են եկել, հողի նմուշներ վերցրել: Իրենց

տվյալներով արդեն կեղտոտ է եղել հողը: Էլի պնդում էին, թե մենք չենք: Երբ լուսանկարներով ցույց ենք տվել իրենց, արդեն լռում էին: Մինչև այսօր ոչ պատասխանատվություն կրող կա, ոչ էլ ներկա իշխանությունը ինչ-որ մի բան չի ասում, որ իմանանք պատասխանատվություն կրող լինելու է, թե չէ այդ վնասների համար: Կոնկրետ ես ու իմ նման այգեգործները մեծ վնասներ են կրել: Պլյուս դրան, չեն թողել մարդիկ, որ պոտենցիալ կարան այգի գցեն, արդեն վախեցել են օգտագործել իրենց հողը՝ այդ բաները տեսնելով: Կոնկրետ ինձ գրկել են այգեգործությամբ զբաղվելուց: Ու մեր դառը փորձը տեսնելով՝ մի հատ պայմանագիր ունենք կնքած ընկերության արդեն նախկին սեփականատիրոջ հետ: Նա ստիպված եղավ մեզ հետ այդ պայմանագիրը կնքել գյուղապետի և ավագանու որոշմամբ:

- **Լևոն Ալիխանյան՝ Շնողի բնակիչ** - Իմ տնամերձը, շենք-շինությունները պոչամբարի պատվարից 250 մ ներքև են գտնվում: Պոչամբարը կառուցվեց շատ փնթի ձևով: Մնահողը չհեռացվեց և մեկուսիչ շերտով չփակվեց: Ֆաբրիկայի գործարկումից 3 ամիս անց իմ տնամերձի տարածքում 3 աղբյուր հայտնվեց, որից մեկը շենքի տակ, որի հետևանքով ճաքեր առաջացան: Կանչեցի, եկան, անալիզներ վերցրին, որ իմանանք՝ ջուրը որտեղից է գալիս, պատասխանը դեռ կգա երևի: Դեռ չի եկել: Այնտեղ, որտեղ հնարավոր էր գումար տնտեսել, առանց խորը վերլուծության, ծրագրային փոփոխություններ կատարեցին: Պոչամբարի ու ֆաբրիկայի տեղերը փոխեցին: Այսօրվա պոչամբարի տեղը պետք է լիներ անվտանգության գոտի, որը կբացառեր Շնող գետի աղտոտումը: Այստեղ կատարվեց նախապես լավ մշաված, մեծածավալ կազմակերպված հանցագործություն: 150 հա անտառ քարտեզներում ջնջեցին՝ սարքելով անօգտագործելի տարածքներ: Մեր տարածքում 1 հա էլ չես գտնի անօգտագործելի տարածք: Հետագայում, կեղծ գործարքների միջոցով 1 հա անտառի համար վճարելով 2 ծառի արժեք, դարձան այդ անտառների սեփականատեր: Այդ կեղծ գործարքների մի մասի պատճենը ես ունեմ: Գերակա շահի տակ ընկած 81,5 հա տարածքի անշարժ գույքի գնահատման պատվերը տրվել է «Օլիվեր գրուպ» ՄՊԸ-ին: Դրա համար տրվել է 100 միլիոն դրամ: Մեզ ամեն հեկտարի համար տրվել է 450-500 հազար դրամ: Այստեղ գույքի գնահատման փոխարեն կատարվեց խաբեություն և բռնագավթում:

Շահնագարյան Համլետի տարածքը, որ գերակա շահի մեջ չէր մտնում, յուրաքանչյուր քառակուսի մետրին 1111 դրամ վճարվեց, քանի որ այնտեղ իսկական շուկայական հարաբերություններ էր: ՀԷՑ-ը տարածք է վարձակալել արդեն 6-7 տարի, յուրաքանչյուր քառակուսի մետրի համար տարեկան վճարում է 3000 դրամ: Էդ մարդը արդեն 18-20 հազար դրամի մի քառակուսի մետրից եկամուտ է ստացել, որովհետև գերակա շահի տակ չէր այդ տարածքը:

Հիմա ճանապարհաշինարարները Շնողի վարչական տարածքում գերակա շահի համար մեկ ծառի դիմաց վճարում են 150-200 հազար դրամ: Իսկ «Թեղուտ» ՓԲԸ-ն մեզ յուրաքանչյուր ծառի համար վճարել է 0 դրամ:

Ռազմիկ Հախվերդյանը ինֆարկտ ստացավ, մահացավ, երբ հասկացավ, որ իր ունեցվածքը խլում են առանց համարժեք փոխհատուցման: Դեռ սովետի ժամանակից Թեղուտից վերև ձկնաբուծարան էր սարքել: Հախվերդյանն այնտեղ 1,5 հա այգի ուներ: Ըստ «Օլիվեր գրուպի»՝ 450 ծառի՝ յուրաքանչյուրը տարեկան 500 կգ բերքատվությամբ, շուկայական արժեքը պլյուս 15 տոկոս, 1 միլիոն դրամ էր:

Պետությունից գնված իմ 76 քառակուսի մետրանոց առանձնատունը գնահատվեց 1 միլիոն 500 հազար դրամ: Դեռ քարտեզագրումից առաջ իմ կառուցած անասնագուրը, կերի պահեստը, կիլոմետրանոց ջրագիծն ու ցանկապատը, ճանապարհները չհաշվարկվեցին՝ պատճառաբանելով, թե գրանցված չեն: Ըստ գերակա շահի օրենքի՝ տվյալ գույքի վրա գտնված ցանկացած արժեք ունեցող բան գնահատվում է:

Շնող գետի ափին ունեմ այգի: Ընկերները, որ իրենց հողերը թունավորել են, ես իմ ջրագիծը քանդելով՝ ջրագրկել եմ ինքս ինձ: Այգիս չորացրել եմ, մտածելով, որ գոնե հետագայում այդ տարածքի քիմիական բաղադրությունը կլինի նորմալի սահմաններում՝ հետագայում օգտագործելու համար:

Հույս ունեմ, որ այս դատավարությունը պետբյուջեից աշխատավարձ ստացող որոշ պաշտոնյաների անցյալից կբերեն ներկա, որից հետո Շնող, Թեղուտ գյուղերի տնտեսապես վնաս կրած գյուղացիները համարժեք փոխհատուցումներ կստանան:

Հանցագործությունների քանակն էնքան շատա, որ 1-2 օրը չի հերիքի, որ թվարկեմ: 100 հազարավոր խորանարդ մետր ավազ է գողացվել պետությունից: Հանքահենությամբ են զբաղվել:

- **Արայիկ Բաբայան՝ Շնողի բնակիչ**- Ես ունեմ 5 հա այգի, որից 3 հա-ը 4 տարի առաջ եմ գնել վարկով՝ 60 հազար դոլարով: Ես հողը վերցրել եմ ապառիկով, նոտարով հաստատված փաստաթուղթ ունեմ: Արտահոսքից այգում խոզ, բադ, հավ, ճանձ, ինչ պահեի, սաղ սասկում են: Ձուն, միսը էլ չգիտեմ՝ ուտելու է, թե՛ չէ: Ջուրը կեղտոտում են, այդքան բողոքել ենք, ոչ մեկին բանի տեղ չեն դրել: Դեբեղում որ հիմա կենդանի շունչ չկա, դրա համար ո՞վ պիտի պատասխան տա:
- **Ռայա Մեծլույան՝ Թեղուտի բնակիչ**- Ընկերությունն իր վրա պարտավորություն վերցրեց, որ 357 հա հատված անտառի դիմաց պետք է տնկի 714, այսինքն՝ կրկնակի: Փաստացի այդ անտառները չկան, գոյություն չունեն: Բայց շատ գեղեցիկ շուտներ է կազմակերպել հանքը շահագործող ընկերությունը, թե այս հատվածում այսքան անտառ ենք տնկել, ներգրավել երիտասարդությանը, դերասանների, դպրոցի աշակերտների: Ում հետ, որ կնքել են պայմանագրեր, որ վերահսկեն այդ ամենը, ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության նախարարությունների հետ, ոչ մի բան չի արվել, ու ոչ ոք պատասխանատվություն չի կրում այս ամենի համար: Դրա համար էլ մենք այս խնդիրների առաջ ենք կանգնած:

Սոցիալական-տնտեսական իրավիճակը շատ վատ է, որովհետև մեր կառավարությունը, երբ գերակա շահ ճանաչեց մեր հողերի նկատմամբ, որոշմամբ կային կետեր, որ ամեն ինչ լավ է լինելու, նոր ճյուղեր են զարգանալու: Բայց փաստացի Թեղուտում բացի հանքը շահագործելու համար, ուրիշ ոչինչ չի արվել,



ոչ մի նոր տնտեսական ճյուղ չի զարգացել: Ընդհակառակը, եթե ինչ-որ բան կարող էր զարգանալ, այլևս չի կարող զարգանալ:

Եթե գյուղացիները նախկինում աշխատում էին, հիմա մտածելակերպը փոխվել է: Հիմա ես չեմ պատկերացնում՝ ոնց կարող են գյուղատնտեսությամբ զբաղվել, եթե հողատարածք չունեն:

#### **V Վկաների վկայությունները.**

- **Լևոն Գալստյան՝ աշխարհագրագետ, Հայկական բնապահպանական ճակատ նախաձեռնության անդամ** – Երբ 2013 թ. մենք գնացինք հանքավայր, մի մասը մտան հանքավայրը տեսնելու, թե ինչ փուլում են աշխատանքները, մյուս մասը գնաց տեսնելու տնկված ծառերը: Պարզ էր, որ այդտեղ ծառ չկար: Երբ այդ տեսանք, հարցում ուղարկեցինք Բնապահպանության և Գյուղատնտեսության նախարարություններին, որովհետև իրենք էին պատասխանատու և վերահսկող մարմինները: Այնտեղից ստացանք պատասխան, որ այդ ծրագիրը իրականացրել են, բայց հետո պարզվել է 70-80 տոկոս կաչողունակության փոխարեն եղել է 10-12 տոկոս: 2015 թ. «Վալեքս» ընկերությունը հայտարարում է, որ 750 հազար դոլար տրամադրել է այն ընկերությանը, որը պետք է ծառատնկման աշխատանքներ իրականացնել և մենք դատի է տվել այդ ընկերությանը, թե ինչու այդ աշխատանքները չեն կատարվել: Հիմա այստեղ հարց է առաջանում՝ արդյոք նախապես կանխամտածված պայմանավորվածությամբ գործարք չէ, որ հերթական անգամ փողերը մի գրպանից գնան մյուս գրպանը և ոչ մի, այսպես կոչված, անտառի փոխհատուցման ծրագիր չիրագործվի:

Մենք գիտենք, որ այդ ծրագիրը չի իրագործվել, և դա այս հանցագործության մի մասն է: Այնքան պարզ հանցագործություն է, որ դրա հայտնաբերելը 15 րոպեի գործ է:

2016 թ. փետրվարին մենք տեսանյութի հիման վրա հարցում ուղարկեցինք Բնապահպանության նախարարություն, թե ոնց է ստացվում, որ պոչամբարի պատվարից ջրերը գալիս, լցվում են Շնող գետը, եթե նախագծով ջուր չպետք է դուրս գար ընդհանրապես: Ինչպես մյուս բոլոր հանքավայրերի ահազանգերի դեպքում մենք ստացանք պատասխան, որ այդ պահին շատ ուժեղ անձրևներ էին եկել, բայց անձրև չկար: Ստացվում է, որ այս փաստով նույնպես պատկան մարմինները կոծկում են արված էկոլոգիական հանցագործությունը: Սրա հիման վրա այդ ժամանակ եղավ նաև Սեյրան Մինասյանի Շնող գետի ջրերի ավազանի աղտոտման վերաբերյալ հրապարակումը, որտեղ հստակ նշված է, թե մինչ շահագործում սկսելը ինչպես է Շնող գետի վիճակը փոփոխվել, նույնիսկ մինչ պոչամբարից արտանետումների սկսվելը: Մինչև այդ արդեն ջրի որակը սկսել է փոխվել: Նա բերել էր տվյալներ 2009-2015 թթ., երբ շահագործումը նոր պիտի սկսվեր:

2017 թ. նոյեմբերին նամակ ուղարկեցինք Կարեն Կարապետյանին, հստակ կետերով, թե ինչ խախտումներ են արվել պոչամբարի վերաբերյալ: Ստացանք պատասխան, որ ստուգումներ չենք արել, որովհետև Կառավարությունը չէր թույլատրում: 2018 թ. պլանային ստուգումների մեջ կա Թեղուտը, այդ ժամանակ կստուգեն: 2018 թ. սկզբում այդպես էլ չարեցին: Հետո դադարեցվեց արդյունահանումը:

Թեղուտում չհասցրեցին որևէ ստուգում կամ ուսումնասիրություն անել, ոչ էլ արվել է առ այսօր:

2018 թ. հունիսին նամակ ենք գրել Էներգետիկ պաշարների նախարարություն կոնկրետ հարցադրումով՝ ինչու «Թեղուտ» ՓԲԸ-ին ժամանակին չի արվել զգուշացում օրենքին համապատասխան կարգով, երբ ինքը դադարեցրել է աշխատանքները՝ խախտելով պայմանագրային պայմանները, և ինքը առնվազն զգուշացման էր արժանի դրա համար: Եվ ինչու դրանից հետո ոչ մի հանրային քննարկում չի եղել այդ թեմայով, և, ի վերջո, ինչու «Թեղուտ» ՓԲԸ-ն չի գրկվել լիցենզիայից:

«Վալլեքս» ընկերությունը պաշտոնական մարմիններին որևէ նամակ չի գրել, որ դադարեցնում է շահագործումը և ինչ նպատակով է դա անում:

Մեր տեսածները փաստում են, որ իրագործվել է Էկոլոգիական-տնտեսական և այլ տիպի հանցագործություն, և այդ հանցագործությունը ոչ միայն չի գնահատվել, այլ թաքցվել է պետական մարմինների կողմից, հիմա էլ իր գնահատականը չի ստացել:

- **Անի Խաչատրյան՝ Հայկական բնապահպանական ճակատ նախաձեռնության անդամ** - Երբ մենք 2018 թ. փետրվարին հանքի աշխատանքները դադարեցնելուց հետո գնացինք այդ տարածքները, հանդիպեցինք շնողիների հետ: Մեր գնալուց մի քիչ առաջ, մեծ արտահոսք էր եղել դեպի Դեբեդ գետը: Մեծ խողովակով, երևի կոմբինատից էր, իրենց թափոնաջրերը միանգամից բաց էին թողնում Դեբեդ գետը: Այդ ժամանակ նաև Ախթալայում էր վթար եղել: Միաժամանակ, այդ ամբողջ ջրերը Դեբեդում էին: Այդտեղ ՀԷԿ կար, որից մի քիչ ներքև ծանծաղ էր, մարդկանց հողմասերի մոտ, նստվածք էր տվել, տիղմ էր, վիղեռները կան, շատ կեղտոտ էր պոչամբարի մասսայով ու ջրերով:

Մենք որ գնացինք, տեսանք, այդ պահին ջուր չէր հոսում: Բայց խողովակից ահավոր հոտ էր գալիս: 2017 թ. մայիսից մինչև փակվելը հոսում էր: 7-8 ամիս: Տարածքի մեղուները սասկել էին: 2016 թ. որ գնացել էինք, տեղացիներն ասել էին, որ նման արտահոսքը լինում է պարբերաբար: Այս ամեն ինչը հրապարակել ենք, տարբեր պետական մարմինների ուղարկել ենք, որից մի քանի ամիս հետո պատասխան եղավ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից, որ իրենք գնացել են և ոչ մի խնդիր չեն հայտնաբերել: Տեսչական մարմնի այս հայտարարությունից հետո «Վալլեքսը» հայտարարություն է տարածել, որ պոչամբարի հետ խնդիր ունեին, դրա համար կանգնեցրին: Այստեղ տեսնում ենք պատկան մարմինների հանցավոր անգործությունը:

- **Ելենա Մանվելյան՝ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի նախագահ** - Որպես առողջապահական, Էկոլոգիական հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ ես ձեր ուշադրությունն եմ ուզում հրավիրել հատկապես շրջակա միջավայրի աղտոտման ռիսկերի, մարդկանց առողջության վրա դրանց թողած հետևանքների վրա: 2018 թվականին մենք «ԷկոԼուր» ՀԿ-ի և Արևմտյան Եվրոպայում քիմիական անվտանգության կենտրոն հանդիսացող չեխական «Առնիկա» կազմակերպության հետ համատեղ Չեխիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ իրականացրեցինք ծրագիր: Մեր ուսումնասիրությունն արձանագրել է շրջակա միջավայրի խիստ աղտոտում,

աղտոտումներ են արձանագրվել գետերի հունային նստվածքներում, բուսական սննդատեսակներում, մարդկանց մազերի մեջ: Բացի ծանր մետաղներից, որոնք գերազանցում են սահմանային թույլատրելի խտությունները ոչ թե տասնապատիկ, այլ հարյուրապատիկ և հազարապատիկ անգամներ: Պղնձի պարունակությունը Թեղուտի պոչամբարի մերձակա տարածքում կազմել է 60 000մգ/կգ, սա 1000 անգամներով գերազանցում է սահմանային թույլատրելի խտությունները: Շրջակա միջավայրի աղտոտումը տեղի է ունենում բոլոր ճանապարհներով՝ օդի, հողի, ջրի, գյուղմթերքի միջոցով: Ոչ միայն տեղի բնակիչներն են օգտագործում այդ աղտոտված գյուղմթերքները, այլ նաև Երևանի բնակիչները: Այս խնդիրների առնչությամբ դեկտեմբերին անցկացրած կոնֆերանսի արդյունքները մենք երկու անգամ ներկայացրել ենք ՀՀ կառավարություն:

Ըստ հետազոտությունների արդյունքների՝ ՀՀ Լոռու մարզը հիվանդացությունների գումարային ցուցանիշներով հանրապետությունում գրավում է առաջին տեղը. ունի 9 բալ: Էլ ինչ տվյալներ է պետք մեր ՀՀ առողջապահության նախարարությանը քայլեր ձեռնարկելու համար:

- **Կարինե Դանիելյան՝ «Հանուն կայուն մարդկային զագացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ-** Երբ իմացանք, որ ՇՄԱԳ-ը դրական կարծիք է ստացել, գիտաժողով կազմակերպեցինք և մեր բոլոր առաջատար փորձագետները դեմ էին: Մենք գիրք ենք հրատարակել, որտեղ մանրամասն կանխատեսվում էր այն ամենը, ինչ հիմա տեսնում ենք: Մենք դա ներկայացրել էինք կառավարություն, նախարարություն, արձագանք չի եղել: Կարծում եմ չպետք է շրջանցենք Առողջապահության նախարարությունը, որովհետև հենց ինքը պետք է հարցը բարձրացներ: Բայց՝ հակառակը: Տարիներ ի վեր Առողջապահության նախարարության ֆունկցիան է եղել ամեն ինչ ծածկադմբոց անել: Մովետական տարիներից դեռ եկել է դա: Հիմա առավել ևս:

Մեր կազմակերպությունը ուսումնասիրել է Հայաստանի էկոլոգիական իրավիճակը, բացահայտել ռիսկային գոտիները երեխաների առողջության համար: Լոռին բոլոր ցուցանիշներով խիստ տարբերվում է վատ իմաստով: Բայց գալիս էին Առողջապահության նախարարության ներկայացուցիչները՝ շատ էլ Ամերիկյան համալսարանը Ախթալայում կամ Ալավերդիում երեխաների արյան մեջ ծանր մետաղներ է հայտնաբերել, ով ասաց, որ դրանից են հիվանդանում:

Փորձեցի հանդիպել առողջապահության նախորդ նախարարին: Տարա բոլոր փորձագետներին իր մոտ: Ստիպված ամեն ինչ ընդունեց: Գնաց լաբորատորիաները, տեխնիկան նայեց, համոզվեց, հետո ասաց՝ ախր ինչ անեմ, քաղաքական հարց է:

## **VI Փորձագիտական եզրակացություն**

**Ռոզա Զուլհալյան՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փորձագետ** - Տվյալ խնդրի շրջանակներում փորձեմ ներկայացնել իմ դիտարկումների և կատարած ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը:

Իմ եզրակացությունները հիմնված են բացառապես ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի, ենթաօրենսդրական ակտերի, նորմատիվ փաստաթղթերի, «Թեղուտ» ՓԲԸ-ի,

«Վալլեքս» ընկերության, համապատասխան պետական լիազոր մարմինների կողմից ի պատասխան մեր հարցումների ստացված պատասխանների, ինչպես նաև միջազգային կազմակերպության կողմից կատարված հետազոտությունների արդյունքների համադրման տվյալների վրա:

ՀՀ կառավարությունը, երբ հաստատում էր Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի և պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրը, արձանագրել էր, որ ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում կունենա **համապետական կարևոր նշանակություն**, ծրագրի իրականացումը **կապահովի Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի և արտահանման ծավալների էական աճ, մեծապես կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը, լուրջ խթան կհանդիսանա տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար, էապես կբարելավվի տարածաշրջանի՝ ենթակառուցվածքներով ապահովվածությունը** (ծրագրի շրջանակներում կկառուցվեն նոր ճանապարհներ, կանցկացվեն գազամատակարարման, կենտրոնացված ջրամատակարարման և էներգամատակարարման համակարգեր), որի հիման վրա հնարավոր կլինի իրականացնել համայնքային, միջհամայնքային և տարածաշրջանային զարգացման նոր ծրագրեր:

ԱՅԺՄ ԱՐՁԱՆԱԳՐԵՆՔ, ԹԵ ԻՆՉ ՈՒՆԵՆՔ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ 12 ՏԱՐԻ ԱՆՑ Ունենք՝

1. Հարյուրավոր հեկտարների հասնող հատված անտառներ /հատման իրավունքը շահած անհայտ ընկերության կողմից/
2. Արտադրական վտանգավոր քիմիական նյութեր և միացություններ պարունակող հոսքաջրերով աղտոտված ջրային ռեսուրսներ
3. Ծանր մետաղներով աղտոտված հողեր
4. 50 տարվա շահագործման հանար նախատեսած, սակայն տեխնիկական անվտանգության և կայունության ցուցանիշներն իր գործարկման 4-րդ տարում կորցրած, 200 մլն.իսմ ծավալով և 180 հա մակերես ունեցող վթարային պոչամբար
5. Գյուղատնտեսական նշանակությունը կորցրած՝ հանքարդյունահանման լցակայաններով պատված հարյուրավոր հեկտարներով հողատարածքներ
6. Խախտված լանդշաֆտ
7. Հողազրկված 106 ընտանիք Շնողից և Թեղուտ գյուղերում
8. Հազարի հասնող գործազուրկ՝ գոյության այլ միջոցներից զրկված «Թեղուտ» ՓԲԸ-ի նախկին աշխատակիցներ
9. Կաթվածահար տնտեսությամբ ընկերություն
10. «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում շրջակա միջավայրին, պետությանը և քաղաքացիներին հասցրած վնասների փոխհատուցման և վերականգնման հավանականության և դրա համար պատասխանատվություն կրողի անորոշություն
11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Շնող համայնքի վեց բնակիչներին պատճաած նյութական և բարոյական վնասի փոխհատուցման 69,4 հազար եվրո գումարի վճարման վճիռ ՀՀ կառավարության դեմ

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կուտակված անլուծելի խնդիրների համար պատասխանատու են ինչպես ՀՀ նախկին կառավարությունն իր կայացրած որոշումներով, այդ որոշումների իրականացման գործընթացում գործադիր և իրավասու գերատեսչությունները, պետական կառավարման մարմինները, վերահսկողություն իրականացնող՝ աշխատանքի, առողջապահության, տեխնիկական անվտանգության, բնապահպանության, ընդերքի տեսչությունները, հարկային մարմինը, այնպես էլ «Թեղուտ» ՓԲԸ-ն և «Վալլեքս» խմբի ընկերությունները:

Մասնավորապես.

**Ա. ՀՀ ՆԱԽԿԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

1. Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի և պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրն ընդունել է առանց խորը և համակողմանի վերլուծության, հաշվի չի առնվել բաց եղանակով հանքավայրի շահագործման հետևանքով ծագող բոլոր հնարավոր՝ տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, առողջապահական, դեմոգրաֆիական ռիսկերը, չեն քննարկվել այդ ռիսկերի նվազեցմանն ուղղված իրատեսական միջոցառումների այլընտրանքային ծրագրեր
2. Պետական սեփականություն հանդիսացող հասուն և ձևավորված 357 հա անտառային տարածքները տրամադրել է մի կազմակերպության, առանց որևէ երաշխիքի և բավարար հիմնավորման: Միջինացված տվյալներով 1 հա հասուն անտառում միջին հաշվով աճում է 150-200 ծառ, եթե կատարենք հաշվարկ, ստացվում է, որ միայն առկա է եղել 56100 ծառ, որոնց հատման արդյունքում շրջակա միջավայրին պատճառվել է 1,68 մլդ. դրամ վնաս
3. Գերակա շահ հայտարարելու անվան տակ Թեղուտ և Շնող գյուղերի 106 ընտանիքներից ստիպողաբար վերցրել է իրենց սեփականությունը հանդիսացող 81,483 հեկտար գյուղատնտեսական հող և տրամադրել «Թեղուտ» ՓԲԸ-ին առանց լուրջ գնահատականի և տնտեսագիտական հաշվարկների
4. Իր որոշումներով սահմանափակել և կասեցրել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի կիրառումը, դրանով իսկ թույլ չտալով վերահսկողություն իրականացնող՝ աշխատանքի, առողջապահության, տեխնիկական անվտանգության, բնապահպանության, ընդերքի տեսչություններին իրականացնելու պետական ոլորտային վերահսկողություն, և ի թիվս բազմաթիվ այլ բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտների, «Թեղուտ» ՓԲԸ-ի համար նույնպես ապահովել օրենքով սահմանված նորմատիվների և սահմանափակումների չպահպանմամբ գործունեության իրականացում:
5. Չի կազմակերպել իր որոշումների կիրարկումն ապահովող գործընթացների նկատմամբ վերահսկողություն

**Բ. ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

1. 07.11.2006թ. «Արմենիան քափըր փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի

շահագործման 1-ին հերթի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ-135 եզրակացությունը նախարարի կողմից հաստատվել է ՀՀ օրենսդրական պահանջներին անհամապատասխան:/ փորձաքննության ժամանակ հաշվի չեն առնվել շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա հանքավայրի շահագործման և հարստացուցիչ ֆաբրիկայի գործարկման հետևանքները, չեն առաջարկվել դրանց կանխարգելմանն ուղղված գործողություններ, չեն ապահովվել ՀՀ ստորագրված միջազգային պարտավորությունների կատարումը/:

2. «Թեղուտ» ՓԲԸ-ից չի պահանջել նույն փորձաքննական եզրակացության պարտադիր կատարման ենթակա պահանջների իրականացումն այն դեպքում, երբ նույն փորձաքննության դրական եզրակացությունը տվել է այդ պայմանների կատարման նախապայմանով:
3. 2014թ. նոյեմբեր ամսից հետո, երբ ԲՓ-135 եզրակացությունը կորցրել էր իր ուժը, չի պահանջել նոր փորձաքննություն, կամ միջնորդություն չի ներկայացրել ընդերքի շահագործման լիցենզիան հետ վերցնելու համար:
4. Չի կատարել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված՝ շրջակա միջավայրի աղտոտման և բնական ռեսուրսների խելամիտ օգտագործման նկատմամբ լիազորությունները: Առանց ճշտելու դրանցում ներկայացված ցուցանիշների հավաստիությունը, ի գիտություն է ընդունել շրջակա միջավայրի վերաբերյալ ընկերության հաշվետվությունները, դրանով իսկ նպաստել շրջակա միջավայրի շարունակական աղտոտմանը և բնական ռեսուրսների վատնմանը:
5. Տարիներ շարունակ անտեսել է ընկերության գործունեության էկոլոգիական բաղադրիչի վերաբերյալ հասարակական կազմակերպություններից և քաղաքացիներից ստացվող ահազանգերն ու հնչած մտահոգությունները:
6. ՀՀ կառավարության 2013թ. հունվարի 10-ի N 22-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հանքի փակման ծրագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան չի իրականացրել պոչանքային տնտեսություններից արտահոսքերի հետևանքով ջրերի որակի և ռեժիմի փոփոխության, դրենաժային ջրերի առաջացման, օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի մշտադիտարկումներ:

#### Գ. «ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ-Ը

1. 2014թ. նոյեմբեր ամսից իրականացրել է անօրինական տնտեսական գործունեություն: /ՀՀ Ընդերքի մասին օրենքով ընդերքի շահագործումը թույլատրվում է բացառապես շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության դեպքում, իսկ **բնապահպանության նախարարի կողմից 07.11.2006թ. հաստատված «Արմենիան քափըր փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման 1-ին հերթի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» շրջակա միջավայրի վրա ազդեցության**

**փորձաքննության ԲՓ-135 եզրակացության ժամկետն ավարտվել է 2014թ. նոյեմբերի 7-ին/:**

2. Հարստացուցիչ ֆաբրիկայի պոչամբարը կառուցել է տեխնիկական թերություններով, ինչի արդյունքում այն տեխնիկական անվտանգության և կայունության ցուցանիշները կորցրել է իր գործարկման 4-րդ տարում:
3. Իր գործունեությամբ տարածաշրջանում ստեղծել է էկոլոգիական աղետալի իրավիճակ՝ հողերի աղտոտում ընդերքօգտագործման թոփոններով և լցակույտերով, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտում արտադրական, կենցաղային և հանքային հոսքաջրերով, մթնոլորտային օդի աղտոտում հանքահանության և հանքի մանրացման գործընթացում, անտառային տարածքների կրճատում, լանդշաֆտի խախտում, հանքային ռեսուրսների անհամաչափ օգտագործում:
4. Չի կատարել հանքի շահագործման նախագծով պահանջվող պարտավորությունները. չի կատարել կրկնակի մակերեսով անտառավերականգնման աշխատանքների իրականացման և հողի բերի շերտի պահպանման, աստիճանական ռեկուլտիվացիայի պարտավորությունները:
5. Տարածաշրջանում ստեղծել է լարված սոցիալական վիճակ՝ աշխատանքների անժամկետ դադարեցման հիմքով լուծել է 1032 աշխատակիցների հետ կնքած աշխատանքային պայմանագրերը, այն նույն աշխատակիցների, որոնց մի մասից վերցվել էր իրենց սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը և նրանց թողել առանց ապրուստի միջոցների:
6. Ցուցաբերել է Ֆինանսական կառավարման անկարողունակություն, կամ կանխամտածված սխեմաների կիրառում / հանքի 25 տարվա շահագործման ծրագիր ունեցող ընկերությունը գործունեության 11-րդ տարում բանկից վերցրած վարկի անվճարունակության պատճառով անսպասելիորեն իր անշարժ գույքը և տեխնիկական զիջել է վարկավորող բանկին/:
7. Դատական կարգով գերակա հանրային շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա սեփականության օբյեկտների օտարման գործընթացում թույլ է տվել ապօրինություններ/ «Թեղուտ» ՓԲԸ-ի հայտերի շրջանակներում ՀՀ դատական մարմինները կայացրել են սխալ վճիռներ, որոնց բողոքարկման արդյունքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Շնող համայնքի վեց բնակիչներին պատճառած նյութական և բարոյական 69,4 հազար եվրո գումարի վնասի փոխհատուցման վճարման վճիռ կայացրեց ՀՀ կառավարության դեմ/:

**Դ. ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Թեղուտ» ՓԲԸ-ի 8/1-6724 արտադրական վտանգավոր օբյեկտի՝ պոչամբարի տեխնիկական անվտանգության փորձաքննությունը կազմակերպվել է բացառապես «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի շրջանակներում: Չեն կատարվել փաստաթղթերով ներկայացված ցուցանիշների և չափորոշիչների հավաստիությունը հաստատող ուսումնասիրություններ, չափագրումներ, տեղազննումներ, չեն կազմվել փորձարկման ակտեր: Չեն իրականացվել

տեխնիկական, արտադրական ռիսկերի գնահատման լրացուցիչ ուսումնասիրություններ, ինչի հետևանքով դրական փորձաքննություն ստանալուց ութ ամիս անց նույն պոչամբարի տեխնիկական անվտանգության ցուցանիշների՝ միջազգային չափորոշիչներին անհամապատասխանության հիմնավորմամբ 2018թ. հունվարին դադարեցին ընկերության աշխատանքները:

#### **Ե. ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ**

1. Որպես սեփականության օտարման համակարգող պետական լիազոր մարմին համաչափ չի իրականացրել իր գործառույթները:
2. Չի իրականացրել Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պետության կողմից պատվիրակված լիազորությունները:

#### **Զ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԵՄԻՏԵ**

Չի վերահսկել «Թեղուտ» ՓԲԸ-ի ֆինանսական գործունեությունը, ինչի արդյունքում միայն ընկերության աշխատանքների անժամկետ դադարեցման մասին հայտարարությունից մի քանի ամիս անց պարզ դարձավ, որ հանքի շահագործման դադարեցման իրական պատճառներից մեկն էլ ռուսական ՎՏԲ Բանկի վարկային պարտքի վճարման անկարողությունն է:

#### **Է. ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

«Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից դատական կարգով գերակա հանրային շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա սեփականության օբյեկտների օտարման գործընթացում կայացրած դատավարությունների ընթացքում թույլ են տվել ապօրինություններ/Կայացրել են սխալ վճիռներ, որոնց բողոքարկման արդյունքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Թեղուտ համայնքի վեց բնակիչներին պատճառած նյութական, և՛ բարոյական վնասի փոխհատուցման 69,4 հազար եվրո գումարի վճարման վճիռ կայացրեց ՀՀ կառավարության դեմ/:

### **VII Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր**

Սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հետևյալն են.

- ՀՀ կառավարությունը 2007 թվականի նոյեմբերի 1-ին ընդունել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N 1279-Ն որոշումը, որով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող գյուղատնտեսական նշանակության 81,483 հեկտար, այդ թվում 79,089 հա՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ ճանաչել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և այդ հիմնավորմամբ փոխել դրանք արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի: Նույն որոշմամբ 2,398



հա մակերեսով հողերի կատեգորիան փոխվել է էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի և հանձնվել «Արմենիան Քափրր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը: Նշված որոշումը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենքներին և միջազգային նորմերին, դրանով խախտվել են քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները:

- ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 2006թ. նոյեմբերի 7-ին հաստատվել է «Արմենիան քափրր փրոգրամ ՓԲԸ-ի կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի **շահագործման 1-ին հերթի** շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ-135 եզրակացությունը, որի գործողության ժամկետն **ավարտվել է 2014թ. նոյեմբերի 7-ին**: Իրականում, ՀՀ բնապահպանության նախարարությունը, չի կատարել փորձաքննություն, հիմնվել է միայն Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի վրա, հաշվի չի առել հանրության կարծիքը և հիմնավորումները, չի համաձայնեցրել այլ գերատեսչությունների հետ: Այս եզրակացությունը **հակասում է** ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ ջրային օրենսգրքին, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին, ՀՀ հողային օրենսգրքին, ՀՀ կոնցեսիաների տրամադրման մասին օրենքին, ՀՀ ՇՄԱՓ օրենքին, «Բուսական աշխարհի մասին» և ՀՀ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներին, Օրհուսի և Էսպոյի կոնվենցիաներին (հիմնավորումները՝ 2009թ. ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում, հղումը <http://teghut.am/wp-content/uploads/2012/03/%D5%80%D5%A1%D5%B5%D6%81%D5%A1%D5%A4%D5%AB%D5%B4%D5%B8%D6%82%D5%B4.pdf>):
- Փորձաքննության եզրակացությունը և թույլտվությունները տրվել են «Արմենիան Քափրր Փրոգրամ» ՓԲԸ-ին, իսկ գործունեությունն իրականացվել է «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից:
- Փորձաքննության ժամկետի ավարտից՝ 2014թ. նոյեմբերի 7-ից հետո Ընկերությունը չի դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ նոր փորձաքննություն իրականացնելու համար, փաստորեն չորս տարի նա իրականացրել է ապօրինի տնտեսական գործունեություն և ստացել շահույթ:
- «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Թեղուտ» ՓԲԸ-ի 8/1-6724 արտադրական վտանգավոր օբյեկտի՝ պոչամբարի տեխնիկական անվտանգության փորձաքննությունը կատարվել է միայն 2017թ. և տրվել է դրական եզրակացություն այն դեպքում, երբ այդ փորձաքննությունն իրականացվում է մինչև գործունեություն սկսելը: Իրականում, տեխնիկական փորձաքննություն չի իրականացվել, եզրակացությունը տրվել է Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա, արդյունքում մեկ տարի անց պաշամբարը դարձել է վթարային:

- ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և Ընդերքի տեսչությունը չեն դադարեցրել Ընկերության գործունեությունը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:
- ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը 2013թ. փետրվարի 20-ին «Թեղուտ» ՓԲԸ-ին տվել է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ՇԱՎԹ-29/376 թույլտվությունը, նույն ամսաթվով կնքել է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-376 պայմանագիրը, ինչպես նաև տրամադրել է թիվ ԼՎ-376 լեռնահատկացման ակտը: Նոր պայմանագրով տրվել է փոփոխված աշխատանքային նախագիծ, հետևաբար այն պետք է անցնեք շրջակա միջավայրի վրա ազդեցության նոր փորձաքննություն, ինչը չի արվել: 2010թ., նոր աշխատանքային նախագծի համաձայն, ավելանալու է բացահանքի շահագործման խորությունը՝ 432 մետրից հասնելով 890 մետրի, առաջանալու է թափոնների ավելի մեծ քանակություն, քան նախատեսված էր 2006 թվականին կազմված և փորձաքննության ներկայացված նախագծով, թափոնները տեղադրելու համար պահանջվելու են ավելի ընդարձակ տարածքներ, քան նախատեսված էր 2006 թվականին կազմված և փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ-ով, փոփոխվել են օժանդակ շինությունների տեղադիրքն ու այլ տեխնիկական պայմանները, փոփոխվել են հանքավայրի շահագործման այն չափորոշիչները, որոնք առկա էին 2006 թվականին փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ-ում / հիմք՝ ERM խորհրդատվական ընկերության զեկույցը <http://teghut.am/2015/07/bac-namak-stugumner/>: Ընկերությունը թաքցրել է Strathcona խորհրդատվական ընկերության եզրակացությունը, որ «Հաշվի առնելով հանքավայրի լեռնային լանդշաֆտը և ուժեղ երկրաշարժային գոտում գտնվելը՝ լրջագույն տեխնիկական և, հետևաբար, ֆինանսական դժվարություն է ներկայացնում 500 միլիոն տոննա պոչանք պարունակող անվտանգ ու բնապահպանական առումով ընդունելի պոչամբար կառուցելը և 600 միլիոն տոննա տարբեր տեսակ թափոններ տեղադրելը այդ տարածքում» (տես՝ Scoping Review, Teghout Copper-Molybdenum Project, Region of LorriArmenia, ForManes Yev Vallex, էջ 10, April 2001, Strathcona Mineral Services Limited, Canada, Հավելված 2):
- ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների հաստատման գործընթացում չի անցկացրել Ընկերության ներկայացրած պաշարների գնահատման, դրանց արդյունահանման տնտեսական օգտակարության անկախ և իրատեսական փորձաքննություն և ուսումնասիրություն: Մինչդեռ, Կանադական Ստրատկոնա խորհրդատվական ընկերության 2001թ. ներկայացրած ուսումնասիրության համաձայն՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում պղնձի պարունակության ցածր աստիճանը, տվյալ ժամանակաշրջանի մետաղական գների և արդյունահանման ակնկալվող ծախսերի պարագայում **հանքավայրի շահագործումը դարձնում է տնտեսապես անարդյունավետ** (Scoping Review,

Teghout Copper-Molybdenum Project, Region of LorriArmenia, ForManes Yev Vallex, April 2001, Strathcona Mineral Services Limited, Canada, Հավելված 2):

- ՀՀ բնապահպանության նախարարությունն ու բնապահպանական տեսչությունը չեն իրականացրել պարբերական մոնիտորինգներ և պլանային ստուգումներ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում՝ չկատարելով իրենց պարտականությունները և անտեսելով հանրային ահազանգերը (տես՝ օրինակ՝ <http://www.armecofront.net/lrahos/teghut/> կամ <http://www.armecofront.net/lrahos/bnapahpanutian-nakhararutiuny-teghut-ynkerutian-pashtpan/>)
- Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն թույլ է տվել խախտումներ հողերի չափագրման և հողերի կատեգորիաների սահմանման գործընթացում, արդյունքում խախտվել են գյուղացիների գույքային իրավունքները, ինչը հանգեցրել է խիստ անհամաչ փոխհատուցման, և ինչը 2018թ. դրությամբ ճանաչվել է որպես իրավունքների խախտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:
- «Արմենիան քափրք փրոգրամ» ՓԲԸ-ն ՀՀ պետական մարմիններին 2005-2007 թթ. փորձաքննության և թույլտվություններ ստանալու համար ներկայացրել է ոչ պատշաճ, շրջակա միջավայրի վրա ազդեցության իմաստով՝ թերի և կեղծված տեղեկություններ (տես՝ 2009թ. ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում, հղումը՝ <http://teghut.am/wp-content/uploads/2012/03/%D5%80%D5%A1%D5%B5%D6%81%D5%A1%D5%A4%D5%AB%D5%B4%D5%B8%D6%82%D5%B4.pdf>, ինչպես նաև տես՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի անկախ փորձագիտական գնահատումներ՝ <http://teghut.am/expert-opinion-arm/>)
- Ընկերությունը հատել է անտառներ սահմանված քանակից ավելի՝ առանց որևէ փոխհատուցում և պատշաճ անտառատնկում իրականացնելու:
- Ընկերության անօրինական գործունեության արդյունքում պատճառվել է առանձնապես խոշոր չափերի տնտեսական և էկոլոգիական վնաս՝ հարյուրավոր հեկտարներ հատված և չվերականգնված անտառներ, արտադրական վտանգավոր քիմիական նյութեր և միացություններ պարունակող հոսքաջրերով աղտոտված ջրային ռեսուրսներ, ծանր մետաղներով աղտոտված հողեր, 50 տարվա շահագործման համար նախատեսված, սակայն տեխնիկական անվտանգության և կայունության ցուցանիշները իր գործարկման 4-րդ տարում կորցրած, 200մլն.լամ ծավալով և 180 հա մակերես ունեցող վթարային պոչամբար, գյուղատնտեսական նշանակությունը կորցրած՝ հանքարդյունահանման լցակայաններով պատված հարյուրավոր հեկտարներով հողատարածքներ, խախտված և չվերագանգնվող լանդշաֆտ:
- Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ֆինանսավորող՝ ՎՏԲ Բանկը չի իրականացրել ռիսկերի իրատեսական գնահատում (due diligence) և իր

Ֆինանսավորած ծրագրի նկատմամբ պատշաճ վերահսկողություն, որի արդյունքում ստեղծված աղետալի իրավիճակի համար կիսում է պատասխանատվություն:

- Ընկերությանը ֆինանսավորող Դանիայի արտահանումները խթանող «Արտահանումների վարկավորման գործակալությունը» (EKF) և PensionDenmark մասնավոր կենսաթոշակային հիմնադրամը 2017 թվականի հոկտեմբերի 16-ին դադարեցրել են դեռևս 2013 թվականին Թեղուտի պղնձամուլիբդենային հանքի շահագործման համար ՎՏԲ բանկի միջոցով «Վալլեքս» խմբին տրամադրած շուրջ 62 միլիոն ամերիկյան դոլարի չափով վարկը: Վարկի դադարեցման պատճառները եղել են կնքված պայմանագրի մաս կազմող սոցիալական և բնապահպանական ծրագրի կետերի խախտումները, մասնավորապես՝ ընկերության կողմից ջրերի աղտոտումը, պոչամբարի հետ կապված խնդիրները, ինչպես նաև Ալավերդու պղնձաձուլարանի աշխատանքային պայմանների վատթար վիճակը:

### **VIII Դատարանի իրավական վերլուծությունը**

Լսելով դիմումատուի, տուժողների, վկաների, փորձագետի բացատրությունները, պատասխանողի ներկայացուցչի առարկությունները, հետազոտելով գործում առկա ապացույցները՝ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

- Թեղուտի հանքի տարածքը Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ջրհավաք ավազան է, հետևաբար, պետք է կատարվեր շրջակա միջավայրի վրա ազդեցության միջազգային գնահատում և փորձաքննություն: «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի 2-րդ հոդ. 1-ին կետի համաձայն. «1. Կողմերն անհատական կամ կոլեկտիվ կարգով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ և արդյունավետ միջոցները պլանավորված գործունեության արդյունքում ներգործվող զգալի վնասակար անդրսահմանային ազդեցության կանխման, ինչպես նաև դրա նվազեցման և վերահսկման համար»: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն. «3. Ծագման Կողմն ապահովում է, որ, սույն Կոնվենցիային համապատասխան, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կատարվի մինչև 1-ին հավելվածում ընդգրկված՝ զգալի վնասակար անդրսահմանային ազդեցություններ գործող պլանավորված գործունեության տեսակի իրականացման կամ իրականացումը թույլատրող որոշման ընդունումը»: Նշված Կոնվենցիայի դրույթները չեն կատարվել Հայաստանի կողմից և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունն իրականացվել է՝ առանց անդրսահմանային գնահատման արդյունքները հաշվի առնելու:
- Փորձաքննություն իրականացնող մարմինը խախտել է նաև ՀՀ Ջրային օրենսգրքի մի շարք նորմեր: Այսպես, ՀՀ Ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն ՀՀ ջրային ռեսուրսները ենթակա են պահպանության և

սահմանված են հատուկ պահանջներ դրանք պահպանելու համար: Մասնավորապես, ստորերկրյա ջրերի պահպանման գոտիներում արգելվում է պոչամբարների տեղադրումը, ռադիոակտիվ և թունավոր թափոնների արտանետումը, արտահոսքը, թաղումը, պայթեցման աշխատանքների իրականացումը, հետախուզական նպատակների համար ճնշումային հորատանցքերի պահպանումը: Բացի այդ, ՀՀ Ջրային օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն. «արգելվում է ջրային ռեսուրսների որակի վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբանոցների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրումը»:

Թեղուտի լեռնահարստացման կոմբիտատի 2005թ. ՇՄԱԳ-ում նշված է, որ այդ տարածքում առկա են նաև հանքային ջրերի աղբյուրներ, որոնք հատուկ պահպանության կարիք ունեն: ՀՀ Ջրային օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ կեղտաջրերը ընդունելու համար արգելվում է օգտագործել այն ռեսուրսը, որը պարունակում է բնական բուժիչ ռեսուրսներ, գտնվում է առանձնահատուկ պահպանվող ավազանային տարածքների կազմում, առողջարանների հարևանությամբ, ինչպես նաև հանդիսանում է արժեքավոր տեսակի ձկների ձվադրման, արժեքավոր կենդանիների բնակավայր կամ բույսերի աճման տեղամաս: Փորձաքննություն իրականացնող մարմինը, հաշվի չի առել ՀՀ Ջրային օրենսգրքի այս դրույթները և տվել է դրական եզրակացություն:

- Հաշվի չի առնվել նաև, որ հանքավայրին մոտ գտնվում են Թեղուտ /3 կմ/ և Շնող /5կմ/ գյուղերը, այն դեպքում, երբ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հեղվածի համաձայն արգելվում է բնակավայրերում հանքակույտերի, լցակույտերի տեղադրումը, մթնոլորտային օդը փոշով, վնասակար նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող այլ թափոնների պահեստավորումը:
- Փորձաքննության ընթացքում անտեսվել են նաև ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի նորմերը: Մասնավորապես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն արգելվում է ընդերքի օգտագործումը, եթե այդ տարածքներում կան գերեզմաններ, բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի աճելավայրեր կամ կենդանիների ապրելավայրեր, ինչպես նաև եթե այդ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիները: Թեղուտի հանքավայրի տարածքում առկա են նշված բոլոր հանգամանքները: Հետևաբար, հաշվի առնելով, որ ՀՀ հողային օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն նշված հողերը համարվում են պատմամշակութային հողեր, ապա այդ հողերի վրա արգելվում է դրանց նպատակային ու գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն: Պատմամշակութային հուշարձաններով զբաղեցրած տարածքները հանքարդյունահանման նպատակով տրամադրելը խախտել է նաև ՀՀ Սահմանադրության /2005թ./ 11-րդ հոդվածը, որտեղ նշված էր.

«Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո»:

- Թեղուտ հանքի շահագործման նպատակով հատկացված տարածքում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ: «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն. «Կենդանական աշխարհի օբյեկտների և դրանց ապրելավայրերի անվտանգության, ինչպես նաև կենդանիների կենսագործունեության առանձնահատկությունների անխաթարությունն ապահովելու նպատակով նախատեսվող տնտեսական, շինարարական, սոցիալական և այլ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»: Իսկ նույն Օրենքի 18-րդ հոդվածում նշված է. «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը»:

- Թեղուտ հանքի շահագործման նպատակով հատկացված տարածքում առկա են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ: «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն. «Բուսական աշխարհի օբյեկտների և դրանց աճելավայրերի անվտանգությունը, ինչպես նաև բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը, նախատեսվող տնտեսական, սոցիալական և այլ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան»:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն. «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը»:

Նշված օրենքները բացի ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներից կարգավորում են նաև կենդանական աշխարհի և բուսական աշխարհի բոլոր օբյեկտների, այդ թվում նրանց ապրելավայրերի և աճելավայրերի պահպանության նորմերը, հետևաբար, բույսը կամ կենդանին այդ տեղից տեղափոխելով, խնդիրը չի լուծվում, քանի որ կենդանիների և բույսերի ապրելավայրերը և աճելավայրերը բաց հանքի պարագայում ոչնչանում են, հետևաբար, խախտվում են նշված օրենքների դրույթները: Այսպիսով, «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը պետք է հաշվի առներ, որ միայն ՀՀ Կարմիր գրքում նշված կենդանիների և բույսերի առկայությունը /ինչը չի արել/, այլ դեկլարավեր կենդանական և բուսական աշխարհի բոլոր օբյեկտների իրավական պահպանության սկզբունքով և տար փորձաքննական բացասական եզրակացություն:

- Խախտվել է ՀՀ անտառային օրենսգիրքը: Մասնավորապես, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը տրվել է, առանց հաշվի առնելու «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարծիքը և առանց վերջինիս համաձայնության, ինչպես նաև խոշոր չափի անտառահատում է

իրականացվել «Թեդուտ» ՓԲԸ-ի կողմից առանց «Հայանտաո» ՊՈԱԿ-ի կողմից հատատեղի հատկացման, առանց վերջինիս վերահսկողության:

- Խախտվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջները: Մասնավորապես.

- Ընկերությունը չի կատարել ազդեցության գնահատում մարդու առողջության վրա, իսկ շրջակա միջավայրի վայրի վրա ազդեցությունը գնահատվել է թերի: Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Ազդեցության գնահատման փուլում՝

1) գնահատվում է հիմնադրությային փաստաթղթի դրույթների և նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.

2) բացահայտվում են հիմնադրությային փաստաթղթի մոտեցումների և նախատեսվող գործունեության լուծումների այլընտրանքային տարբերակները, և գնահատվում է դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի, **մարդու առողջության և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա.**

3) կատարվում է նախատեսվող գործունեության այլընտրանքային տարբերակների էկոլոգատնտեսական վերլուծություն և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորում.

4) մշակվում են բնապահպանական միջոցառումներ, ներառյալ՝ ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանխարգելելու, նվազեցնելու կամ բացառելու նպատակով.

5) **հաշվի են առնվում ազդեցության աստիճանը՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա տարածքի աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, ազդեցության հավանականությունը, բարդությունը, աստիճանը, տևողությունը, հաճախականությունը և տարբեր ազդեցությունների գումարային բնույթը.**

6) գնահատման ընթացքում հաշվի է առնվում նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով **շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը**»: Այդ գնահատումը բացակայում է նաև փորձաքննական եզրակացության մեջ:

- Օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն. «7. Փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

Ընկերությունը փորձաքննական դրական եզրակացությունը ստացել է 2006թ.՝ 8 տարով /մինչև 2014թ./, այսինքն, պետք է սկսեր գործունեությունը 2007թ., սակայն հանքարդունահանումը սկսել է 2014թ. երբ փորձաքննական եզրակացության ուժը կորցրած է եղել:

Բացի այդ, Ընկերությունն իր գործունեությունն իրականացրել է նոր նախագծով, որ փորձաքննություն չի անցել: Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

1) գործունեությունն իրականացվում է փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի և փորձաքննական եզրակացության պահանջների շեղումներով.

2) փորձաքննության ենթարկված նախագծային և հիմնադրությային փաստաթղթերում կատարվել են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փոփոխություններ՝ առանց լիազոր մարմնին այդ մասին տեղեկացնելու:

3) սույն հոդվածի 1-ին մասով ներկայացված պայմանները չեն կատարվել սահմանված ժամկետներում:

4) ընդունվել է բնապահպանական նոր օրենսդրություն»:

Տվյալ դեպքում, նշված բոլոր հանգամանքները եղել են եզրակացությունը ուժը կորցրած համարելու համար, ինչը ՀՀ բնապահպանության նախարարությունը չի կատարել:

Այսպիսով, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականում չի կատարվել շրջակա միջավայրի վրա ազդեցության պատշաճ գնահատում և փորձաքննություն և ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի խախտմամբ տրվել է փորձաքննական դրական եզրակացություն:

- Չի իրականացվել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված սանիտարահիգիենիկ փորձաքննություն:
- ՀՀ կառավարությունը, խախտելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի /այժմ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի/ պահանջները, իր որոշումներով սահմանափակել և կասեցրել է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի կիրառումը: Մասնավորապես, ՀՀ Կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N-839-Ս, 2016թ. հունվարի 14-ի 43-Ս, 2016թ. հունիսի 9-ի 597-Ս, 2017թ. հունվարի 26-ի N-46-Ս որոշումներով կասեցրել, սահմանափակել է ՀՀ-ում տեսչական ստուգումները, դրանով իսկ խախտել է ընդերքի օգտագործման և պահպանության նկատմամբ պետական վերահսկողությունը իրականացնելու պահանջը /ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ/: Օգտվելով պետական վերահսկողության բացակայության հանգամանքից՝ ընկերությունն էլ իր հերթին ընդերքի տեղամասերի օգտագործման ժամանակ չի պահպանել բնության և շրջակա միջավայրի պահպանության և մարդկանց կյանքի ու առողջության պաշտպանության հետ կապված օրենսդրությամբ սահմանված պահանջները /ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 5-րդ հոդված/:
- «Թեղուտ» ՓԲԸ-ն 07.11.2014թ.-ից մինչև 2018թ.՝ իր կողմից հարկադրաբար աշխատանքների դադարեցումը, գործել է անօրինական, քանի որ ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 07.11.2006թ. հաստատված «Արմենիան քափր փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման 1-ին հերթի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ-135 եզրակացության ժամկետն ավարտվել է



2014թ. նոյեմբերի 7-ին: Դրանից հետո Ընկերությունը նոր փորձաքննական եզրակացություն չի ստացել:

- «Թեղուտ» ՓԲԸ-ն չի կատարել փորձաքննական եզրակացության 2-րդ և 5-րդ կետերի պահանջները: Մասնավորապես՝

1. շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության չեն ներկայացվել և դրական եզրակացության չեն ստացել հանքավայրի, լցակույտերի, պոչամբարի ռեկուլտիվացիայի և կոնսերվացման նախագծային փաստաթղթերը:

2. չի իրականացվել շրջակա միջավայրի բաղադրիչների՝ ջրի, օդի, հողի պարբերական մոնիթորինգ, դրանց վերաբերյալ չեն կազմվել հետնախագծային հաշվետվություններ և դրանք չեն հանրայնացվել:

«Թեղուտ» ՓԲԸ-ն խախտել է ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ին ընդունված «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշման 8.1 կետը, համաձայն որի օգտագործման տրամադրվող անտառային տարածքի դիմաց տնտեսվարողը պետք է առնվազն կրկնապատիկ անտառապատման աշխատանքներ իրականացնի: Այսինքն, «Թեղուտ» ՓԲԸ-ն իր հատած 357 հա անտառի փոխարեն պետք է տնկեր 714 հա անտառ: Ըստ Ընկերության պաշտոնական կայքի 2017թ. վերջի տվյալների՝ հատված 223,2 հա անտառների փոխարեն վերականգնվել է 562 հա անտառային տարածք, սակայն անտառապատման վերաբերյալ տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: «Թեղուտ» ՓԲԸ-ն հաշվետվություն է ներկայացրել, որ տնկվել է 67 հա անտառ, սակայն որևէ տեղ տեսանելի չեն տնկված տարածքները: Շնորհ գյուղի մոտ տնկված 17 հա տարածքի մի մասն այրված է, իսկ մյուս մասի վրա հատուկենտ չորացած տնկիներ են: Մյուս տարածքը՝ Օձուն գյուղի դիմացի սարի ամենաբարձր գագաթին, ենթադրյալ 30 հա վրա ցանվել է կաղնու սերմ, որն նույնիսկ չի ծլել: Մնացած 20 հա տարածքը որտեղ է գտնվում, պարզ չէ: 2015թ օգոստոսի 4-ին ՀՀ բնապահպանության և ՀՀ գյուղատնտեսության նախարարների համատեղ ստորագրված հրամանով, խախտելով ՀՀ կառավարության վերը նշված որոշումը, թույլ են տվել «Թեղուտ» ՓԲԸ-ին 714 հեկտար ընդհանուր մակերեսով անտառապատման համար նախատեսված տարածքից 180 հա տարածքում՝ Շնող և Թեղուտ համայնքներում, որոշ սեփականատերերի հողատարածքներում, անտառի փոխարեն պտղատու այգիներ հիմնել: Այգի հիմնելու հիմնական պատճառը եղել է Թեղուտում և Շնողում ազատ հողատարածքների բացակայությունը: Համայնքի անդամները թույլ չեն տվել իրենց սակավ արոտավայրերում անտառապատում իրականացնել: ՀՀ կառավարության նշված որոշումը չի պարտադրում անտառի հիմնումը նույն համայնքում, հետևաբար, այն պետք է տնկվեր այլ համայնքների տարածքում, եթե նույն տարածքում հնարավոր չէր:

Այսպիսով, «Թեղուտ» ՓԲԸ-ն չի կատարել իր՝ անտառվերականգման պարտավորությունը, ոչնչացնելով պետական սեփականություն հանդիսացող անտառը,

փորձել է այն մասամբ փոխարինել մասնավոր անձանց այգիներ հիմնելով, մասամբ էլ կեղծ թվեր է ներկայացրել իրականում գոյություն չունեցող անտառտնկարկների վերաբերյալ:

- «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից աղտոտվել է ջրային ավազանը: Հանքավայրի շահագործման ժամանակահատվածում Շնող գետի ջրերի որակի 2-րդ /խմելու ջուր/ կատեգորիայից անցել է 5-րդ /բարձր աղտոտվածություն/ կատեգորիայի, ինչը հաստատված է ինչպես ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի 2017թ. երրորդ եռամսյակի հրապարակած տեղեկանքում, համաձայն որի Դեբեդ և Շնող գետերը, որոնցով ոռոգում են իրականացնում Թեղուտ և Շնող գյուղերի բնակիչները, ունեն մոլիբդենով և երկաթով աղտոտվածության բարձր աստիճան /ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայք/, այնպես էլ չեխական «Առնիկա» քիմիական անվտանգության հասարակական կազմակերպության և Պրահայի քիմիական-տեխնոլոգիական համալսարանի մասնագետների կողմից արված հետազոտությունների հաշվետվությամբ [/https://english.arnika.org/publications/heavy-metals-in-lori-region](https://english.arnika.org/publications/heavy-metals-in-lori-region), <https://english.arnika.org/publications/pops-in-alaverdi-eggs/>:
- «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից աղտոտվել են նաև հողերը: Լոռու մարզում աղտոտվածության վերաբերյալ հետազոտությունն իրականացվել է չեխական «Առնիկա» քիմիական անվտանգության հասարակական կազմակերպության և Պրահայի քիմիական-տեխնոլոգիական համալսարանի մասնագետների կողմից՝ Չեխիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ «Քաղաքացիական հասարակության ներգրավումը Հայաստանում հանքարդյունաբերության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում» ծրագրի շրջանակում: Շնող գետի՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի պոչամբարից ներքև գտնվող հատվածի հատակի նստվածքից վերցված նմուշներում մասնագետները հայտնաբերել են, որ պղնձի և մոլիբդենի պարունակությունը համապատասխանաբար 6 և 17 անգամ ավելի բարձր է, քան պոչամբարից վերև գտնվող գետի հատվածում: Աղտոտման աղբյուրը Թեղուտում հանքարդյունաբերական գործունեությունն է, ինչպես նաև Թեղուտի պոչամբարից արտահոսքերը <https://english.arnika.org/publications/heavy-metals-in-lori-region> <https://english.arnika.org/publications/pops-in-alaverdi-eggs/>
- «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից՝ ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանող, պոչամբարի տեխնիկական անվտանգության վկայագիր հաստատելու, անօրինական տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացության, պատշաճ վերահսկողություն չիրականացնելու և պոչամբարի կառուցման տեխնիկական նորմերի խախտման արդյունքում, պոչամբարը դարձել է վթարային, առաջացնելով տարածաշրջանում էկոլոգիական, սոցիալական և անվտանգության լուրջ խնդիրներ:

- Ընկերությունն իրականացնում է հանքարդյունահանման, հորատապայթեցման աշխատանքներ, կամ աշխատանքներ՝ օգտակար հանածոների հանքահարստացման ուղղությամբ, որը սահմանված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ ի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետի պահանջների համաձայն:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. **«տեխնիկական անվտանգության վկայագիր»** արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի կողմից հաստատված **փաստաթուղթ**, որի մեջ արտացոլվում և ամփոփվում են տվյալներ արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնածին վթարների հավանականության, դրանց բնույթի ու մասշտաբների, աշխատողների, շրջակա բնակչության և միջավայրի վրա վտանգավոր գործոնների հնարավոր ազդեցության, դրանց կանխարգելման և վերացման համար նախատեսված միջոցառումների, ինչպես նաև միջավայրի պաշտպանվածությունն ապահովելու նպատակով արտադրական վտանգավոր օբյեկտը գոտիավորող տարածքների մասին»: «Թեղուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 2015թ. փետրվարի 9-ին հաստատած պոչամբարի տեխնիկական անվտանգության վկայագրում բացակայում է օրենքով պահանջվող ամբողջական տեղեկատվությունը, և խախտված են անվտանգության ապահովման հիմնական պահանջների դրույթները:

Վկայագիրը չի արտացոլում պոչամբարում հնարավոր տեխնածին վթարների հավանականության, դրանց բնույթի ու մասշտաբների, աշխատողների, շրջակա բնակչության և միջավայրի վրա վտանգավոր գործոնների հնարավոր ազդեցության, դրանց կանխարգելման և վերացման համար նախատեսված միջոցառումները: Չկա անդրադարձ շրջակա միջավայրի պաշտպանվածությունն ապահովելու տեխնածին վթարների կամ արտադրական պատահարների բացահայտման մեխանիզմներին, նորմատիվ փաստաթղթերով սահմանված հնարավոր տեխնածին վթարների կամ արտադրական պատահարների հավանականության թույլատրելի քանակական ցուցանիշներին, վթարների զարգացման վերլուծություններին:

Չեն գնահատվել Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սոցիալական, կոլեկտիվ, սպասվելիք վնասների ռիսկերը: Մասնավորապես.

դ) սոցիալական ռիսկ՝ բնորոշում է հնարավոր վթարի մասշտաբները և հասցվող վնասի չափերը,

ե) կոլեկտիվ ռիսկ՝ բնորոշում է վթարի հետևանքով տուժվող մարդկանց քանակը,

զ) սպասվելիք վնասի ռիսկ՝ բնորոշում է վթարի հետևանքով առաջացող նյութական կորուստները:

«Թեղուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 2015թ. փետրվարի 9-ին հաստատված պոչամբարի տեխնիկական անվտանգության վկայագիրը կազմվել է ոչ-պատշաճ կերպով և չի համապատասխանում «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական

կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին: Վկայագրում առանձին տեխնածին վթարների գնահատման փոխարեն տրված են միայն օրենքի պահանջները: Վկայագրի ռիսկերի գնահատման բաժինը լրացված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների նկարագրով: Այսինքն, ցանկացած տեսակի ռիսկերի գնահատումը բացակայում է:

Այսպիսով, «Թեդուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 2015թ. փետրվարի 9-ին հաստատած պոչամբարի տեխնիկական անվտանգության վկայագիրը կազմվել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտմամբ:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Թեդուտ» ՓԲԸ-ի 8/1-6724 արտադրական վտանգավոր օբյեկտին 2017թ. մայիսի 26-ին տրված թիվ 560-1 փորձագիտական դրական եզրակացությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N 1359-Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգ» հավելվածի պահանջներին:

Տեխնիկական անվտանգության փորձաքննության ժամանակ անտեսվել են «Թեդուտ» ՓԲԸ-ի 8/1-6724 արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագրի լուրջ բացթողումները և թերացումները:

Փորձաքննությունն իրականացվել է բացառապես «Թեդուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի շրջանակներում: Չեն կատարվել փաստաթղթերով ներկայացված ցուցանիշների և չափորոշիչների հավաստիությունը հաստատող ուսումնասիրություններ, չափագրումներ, տեղազննումներ, չեն կազմվել փորձարկման ակտեր: Չեն իրականացվել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ կապված տեխնիկական, արտադրական ռիսկերի գնահատման, վերլուծման և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների տարված վերլուծության հետ:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը բավարարվել է հետևյալ փաստաթղթերով.

1. պոչամբարային տնտեսության անվտանգության վկայագիր,
2. «Թեդուտ» ՓԲԸ-ի տնօրենի հաստատած 15.01.2015թ. հրահանգներ (ընդ որում չնշելով անգամ հրահանգների անվանումները)
3. հրահանգավորման մատյաններ (դարձյալ անանուն),
4. շենքեր, շինություններ,
5. տեխնոլոգիական սարքավորումներ,
6. տեխնիկական միջոցներ:

Եզրակացության մեջ ակնարկվում է նաև նախագծային փաստաթղթերի, դրանցում հայտնաբերված անճշտությունների և դրանց վերացման մասին ՊՈԱԿ-ին տեղեկացման փաստի մասին: Մակայն նշված չէ, թե ինչ անճշտությունների մասին է խոսքը:

Այս բոլոր անճշտությունների չվերացման, ռիսկերի օբյեկտիվ գնահատման բացակայության, փորձաքննության գործընթացի ոչ անաչառ և ոչ օբյեկտիվ անցկացման,

«Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից ընդերքի շահագործման հետ կապված սահմանափակումների չպահպանման հետևանքով՝ տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց 8 ամիս հետո, պոչամբարի պատվարի կայունության ցուցանիշների անկում է տեղի ունեցել, ինչը հանգեցրել է պոչամբարի վթարային իրավիճակի և տարածաշրջանում լուրջ սոցիալական և բնապահպանական խնդիրների:

- Թեղուտի հանքին տրված անօրինական թույլտվությունների և դրա գործունեության վթարային դադարեցման արդյունքում առաջացել են լուրջ սոցիալական խնդիրներ և պատասխանատվություն:
- Ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ՀՀ կառավարությունը «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 1-ին N 1279-Ն որոշմամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող գյուղատնտեսական նշանակության 81,483 հեկտար, այդ թվում 79,089 հա գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ ճանաչել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և այդ հիմնավորմամբ փոխել դրանք արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի: Այդ որոշման մեջ բացակայում է այն ընդունելու հիմնավորումը, դրա հիմքում դրվել է միայն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի զեկուցագիրը, որի բովանդակությունը նույնպես չի արտացոլվել նշված որոշման մեջ:

Նշված որոշմամբ 2,398 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիան փոխվել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի և հանձնվել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին: Այդ հողտարածքների, արոտավայրերի, այգիների սեփականատերերին ընկերությունը վճարել է՝ 1 քմ-ի համար 59,2 դրամ գումար՝ խոստանալով ընկերությունում նրանց ապահովել աշխատանքով: Մակայն ոչ բոլորին է ապահովել աշխատանքով:

2015 թվականի դեկտեմբերի 31-ի տվյալներով ընկերությունում աշխատում էին 1306 հոգի, որից 143 աշխատող՝ Թեղուտից, 250 աշխատող՝ Շնողից, 438 աշխատող՝ Ալավերդուց և 475 աշխատող՝ այլ գյուղերից: Նշված գյուղերի բնակիչների և նրանց ընտանիքների ապրուստի և եկամտի միակ աղբյուրը՝ հանքավայրում աշխատանքի դիմաց վճարվող աշխատավարձն էր: Ներկայումս, աշխատանքից ազատված, /կամ հարկադիր պարապուրդում գտնվող/ 1032 աշխատողներ չունեն ապրուստի այլ միջոց, քանի որ նրանք զրկված են ոչ միայն իրենց գյուղատնտեսական հողերից, այլ նաև անտառային տարածքների և վայրի բնության բարիքներից /ուտելի խոտաբույսեր, հատապտուղներ, սնկեր և այլ/ օգտվելու և եկամտի լրացուցիչ աղբյուրներ ունենալու հնարավորությունից:

Նշված ապօրինությունների և անօրինականությունների, ինչպես նաև դատական սխալների արդյունքում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ)

- վճիռներ է կայացրել Հայաստանի Հանրապետության դեմ՝ Թեղուտի վեց բնակիչների հայցերով ընդդեմ «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը վճռել է՝ պարտավորեցնել ՀՀ կառավարությանը՝ որպես նյութական, և՛ բարոյական վնասի փոխհատուցում, երեք ամսվա ընթացքում վճարել՝
- Ռամազյանների ընտանիքին՝ 10.400 եվրո  
[/https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189789%22%5D%7D/](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189789%22%5D%7D/),
  - Լևոն Ալիխանյանին՝ 17.200 եվրո  
[/https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189790%22%5D%7D/](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189790%22%5D%7D/),
  - Փարսադանյանների ընտանիքին՝ 8.600 եվրո  
[/https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189792%22%5D%7D/](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189792%22%5D%7D/),
  - Վարդանյանին ու Հախվերդյանին՝ 14.000 եվրո  
[/https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189794%22%5D%7D/](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189794%22%5D%7D/),
  - Սաշինյան և Ռամազյան ընտանիքներին՝ 14 000 եվրո  
[/https://hudoc.echr.coe.int/eng?fbclid=IwAR0RkVenPSu0AqoUpl1wPTE6yMXjn1KwCcapXTht0rYHia\\_lpsXULL\\_PWgU#%20/](https://hudoc.echr.coe.int/eng?fbclid=IwAR0RkVenPSu0AqoUpl1wPTE6yMXjn1KwCcapXTht0rYHia_lpsXULL_PWgU#%20/),
  - Մհեր Ալիխանյանին՝ 5200 եվրո  
[/https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189793%22%5D%7D/](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%5D,%22itemid%22:%5B%22001-189793%22%5D%7D/)

2018թ-ի օգոստոսի 14-ին Շնող համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանի և «Թեղուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Սահակ Կարապետյանի միջև կնքվել է Համագործակցության և գործընկերության N 180814 պայմանագիրը ([http://vallexgroup.am/wp-content/uploads/2018/09/Cooperation\\_agreement.pdf](http://vallexgroup.am/wp-content/uploads/2018/09/Cooperation_agreement.pdf)), ինչը ստեղծված իրավիճակում անիրագործելի է:

Նշված անօրինականությունների արդյունքում առաջացած վթարային իրավիճակի, ինչպես նաև ոչ արդյունավետ ֆինանսական կառավարման արդյունքում «Թեղուտ» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ և ամբողջ գույքը անցել է ՎՏԲ բանկին, որպես սեփականություն: Արդյունքում, «Թեղուտ» ՓԲԸ-ն, իր պարտավորությունները չկատարելով, չվերականգնելով էկոլոգիական, տնտեսական և քաղաքացիներին պատճառված նյութական և բարոյական վնասները, դադարեցրել է իր գործունեությունը հանքավայրում:

Նշված իրավախախտումները հանգեցրել են բնապահպանական, սոցիալական և երկրի անվտանգության լուրջ խնդիրների, պատճառվել են էական էկոլոգիական, տնտեսական և բարոյական վնասներ, խախտվել են մարդու իրավունքները և ՀՀ օրենսդրության և միջազգային նորմեր, ինչի համար որևէ պաշտոնատար անձ, ով օրենքի կոպիտ խախտումներով կայացրել է որոշումներ, իրականացրել փորձաքնություններ, տվել ընդերքօգտագործման և այլ թույլտվություններ, ինչպես նաև կայացրել է դատական

ակտեր պատասխանատվության չի ենթարկվել, և պատճառված նյութական, տնտեսական և էկոլոգիական վնասը չի վերականգնվել:

Այս խնդիրների առաջացմանը նպաստել են նախկին իշխանությունների հովանավորչությունը «Թեղուտ» ՓԲԸ-ին, ստվերային միջամտությունը պետական գերատեսչությունների գործունեության մեջ:

Ելնելով վերը նշվածից, կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերի պահանջներով՝ ՀՀ Բնապահպանական հանրային դատարանը

### **ՎՃՌԵՑ**

1. Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման թույլտվությունների տրամադրման և գործարկման ընթացքում թույլ տրված օրինախախտումները, որոնք տարածաշրջանում հանգեցրել են բնապահպանական աղետի և սոցիալ-տնտեսական ճգնաժամի, ճանաչել որպես բնության, մարդու և պետության դեմ ուղղված հանցագործություն:

2. Ստեղծված իրավիճակի համար պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարությանը, ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ Արտակարգ իրավիճակների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ առողջապահության նախարարություններին, Անշարժ գույքի կադաստրի կոմիտեին, Պետական եկամուտների կոմիտեին, ՀՀ Լոռու մարզպետին, ՀՀ դատական մարմիններին, ինչպես նաև «Արմենիան քալըր Փրոգրամ», «Թեղուտ», «Մանես-Վալլեքս» ընկերություններին, ՎՏԲ բանկին:

3. Պատասխանատու ճանաչել նաև պետական մարմինների և ընկերությունների այն պաշտոնատար անձանց, ովքեր իրենց անգործությամբ, պաշտոնական դիրքի չարաշահմամբ, լիազորությունների գերազանցմամբ, անփույթ գործողություններով նպաստել են տարածաշրջանի էկոհամակարգային հավասարակշռության խախտմանը, ջրերի և հողերի աղտոտմանը, անտառների և լանդշաֆտի վերացմանը, մարդկանց իրավունքների խախտմանը, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը:

### **4. Դիմել ՀՀ Դատախազություն՝**

- Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման անօրինական թույլտվություններ տրամադրած և անօրինական հանքարդյունահանում իրականացնող պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական գործերի հարուցման և նրանց գործողությունների հետևանքով պետությանը և քաղաքացիներին պատճառած վնասների վերականգնման պահանջով:

### **5. Դիմել ՀՀ կառավարությանը՝ պահանջելով.**

- Իրականացնել համալիր՝ ֆինանսական, փաստաթղթային, տեխնիկական աուդիտ «Թեդուտ» ՓԲԸ-ում, «Արմենիան քափըր փրոգրամ» ՓԲԸ-ում, «Վալլեքս» խմբի ընկերություններում և հրապարակել արդյունքները:
- Բացահայտել Թեդուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման մեջ ներգրավված բոլոր կառույցների ֆինանսական գործարքների իրավաչափությունը:
- Ստուգել ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեդուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N 1279-Ն որոշման օրինականությունը:
- Ստուգել ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեդուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N 1279-Ն որոշման հիման վրա ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կատարած գործողությունների օրինականությունը, ինչպես նաև Թեդուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի իրականացրած գործողությունների օրինականությունը:
- Ճանաչել «Թեդուտ» ՓԲԸ-ին և նրա հետ փոխկապակցված ընկերություններին պատասխանատու շրջակա միջավայրին պատճառված վնասի համար, պարտավորեցնել վերականգնել վնասված տարածքները, փոխհատուցումներ տրամադրել տուժած բնակիչներին:
- Մշակել նախագիծ և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ մտցնելու՝ հաշվի առնելով հանրային մասնակցության վերաբերյալ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի դիտողությունները և համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N.1325 – Ն որոշման մեջ:

## **Հանձնարարել.**

### **ՀՀ կառավարության Բնապահպանության և ընդերքի տեսչությանը.**

- Իրականացնել համալիր ստուգում «Թեդուտ» ՓԲԸ-ում և հրապարակել ստուգման արդյունքները
- Արգելել Թեդուտի հանքավայրի շահագործումը՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձաքննական դրական եզրակացության բացակայության հիմքով



- Պատասխանատվության ենթարկել բնապահպանական խախտումներ թույլ տված պատասխանատու պաշտոնատար անձանց

### **ՀՀ բնապահպանության նախարարությանը.**

Հետագա աղետների կանխման և կանխարգելման նպատակով ՀՀ կառավարության 2013թ. հունվարի 10-ի N 22-Ն որոշման պահանջներին համապատասխան, հանքի փակման ծրագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան իրականացնել մշտադիտարկումներ պոչանքային տնտեսություններից արտահոսքերի հետևանքով ջրերի որակի և ռեժիմի փոփոխություն, դրենաժային ջրերի առաջացման, օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով:

### **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը**

- Անվավեր ճանաչել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2017թ. մայիսի 26-ին տրված թիվ 560-1 փորձագիտական դրական եզրակացության համար հիմք հանդիսացած փաստաթղթերը:
- Պարտավորեցնել «Թեղուտ» ՓԲԸ-ին /իրավահաջորդ՝ ՎՏԲ Բանկին/ ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացնելու պոչամբարի հետագա շահագործման կամ կոնսերվացման համար նոր նախագծային փաթեթ, ներառյալ նոր անվտանգության վկայագիրը, անցկացնելով նոր փորձաքննություն՝ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի համաձայն:
- Վերահսկողություն իրականացնել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի պոչամբարի անվտանգության ապահովման նպատակով:

### **ՀՀ Առողջապահության նախարարությանը.**

- Հիմք ընդունել միջազգային և տեղական մասնագիտական հետազոտական ինստիտուտների կողմից կատարված հետազոտությունները Լոռու մարզի Շնող համայնքի և հարող տարացքների հողերի, ջրերի և կենսանյութերի վերաբերյալ, և կիրառել անհրաժեշտ միջոցարումներ տեղական բնակչության արդջապահության ռիսկերի նվազեցման ուղղությամբ:
- Ուսումնասիրություններ կատարել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շրջակա համայնքներում՝ մարդու առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցության վերաբերյալ և արդյունքները հրապարակել:

- Իրականացնել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված սանիտարահիգիենիկ փորձաքննություն:
- Միջոցներ ձեռնարկել կանխելու հանքավայրի բացասական ազդեցությունը մարդու առողջության վրա և ապահովելու մարդկանց առողջության պաշտպանությունը:

### **ՀՀ արդարադատության նախարարությանը.**

Միջնորդություն ներկայացնել ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի դեմ Թեղուտի բնակիչների հայցերով անօրինական դատական ակտեր կայացրած դատավորներին պատասխանատվության ենթարկելու համար /հիմք ՄԻԵԴ-ի վճիռները/, բռնագանձելով իրենցից ՄԻԵԴ-ի վճիռներով սահմանված գումարները:

### **ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեին.**

Ստուգել «Թեղուտ» ՓԲԸ-ին հատկացված հողերի կատեգորիայի, չափերի և այլ տվյալների հավաստիությունը:

### **6. Պարտավորեցնել «Թեղուտ» ՓԲԸ-ին.**

- Վերականգնել խախտված տարածքները
- Տնկել հատված անտառի կրկնապատիկը և պատշաճ խնամք ապահովել,
- Իրականացնել Թեղուտի պոչամբարի անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներ
- Փոխհատուցում վճարել բնակիչներին պատճառված վնասների դիմաց
- Բացառել արտադրական և հանքային արտահոսքերը մակերևութային և ստորգետնյա ջրահավաք ավազան, հողերի աղտոտումը ծանր մետաղներով
- Պահպանել ջրի շրջանառու փակ համակարգի ռեժիմը:

Դատավորներ՝

Ն.Վարդանյան

Հ.Խառատյան

Զ.Հովհաննիսյան

Ի.Զարաֆյան

Օ. Դուլգարյան